2019, ՍԵՊՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 17 (541)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը

Օգոստոսի 30-ին, 2019–2020 թթ. ուսումնական նոր տարեշրջանին ընդառաջ, Ս. Գայանե վանքում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ կրթության մշակների օրհնության ավանդական կարգը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից կազմակերպված արարողությանը ներկա էին Աժ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի մշտական հանձնաժողովի անդամներ, ՀՀ կրթության տեսչական մարմնի, մարզային կրթության վարչությունների ղեկավարներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ քոլեջների ռեկտորներ, ՀՀ ԶՈՒ ռազմակրթական համալսարանների պետեր, Երեւանի եւ մարզերի հանրակրթական դպրոցների տնօրեններ եւ բազում մանկավարժներ:

Օրհնության կարգի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց կրթության ոլորտի երախտավորներին:

Վերջում, ի պատիվ հրավիրյալների, տեղի ունեցավ ընդունելություն:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, կրթության ասպարեզի պատասխանատուներ եւ մանկավարժներ,

Մեծապես ուրախ ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ողջունելու եւ հայրապետական մեր օրհնությունն ու բարեմաղթանքները բերելու ամենքիդ՝ նոր ուսումնական տարվա առիթով:

Գոհունակ սրտով կատարեցինք կրթության մշակներիդ օրհնության արարողությունը, ավանդույթ, որը սկզբնավորվել է դեռեւս 2010 թվականին ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ Մայր Աթոռի գործակցության արդյունքում՝ արժեւորելու կրթության դերակատարությունն ազգային եւ հայրենական մեր կյանքում եւ հայցելու երկնավոր մեր Տիրոջ հովանին ու զորակցությունը նվիրական ձեր առաքելությանը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մշտապես կարեւորել է մանկավարժի եւ ուսուցչի առաքելությունը՝ հստակ գիտակցությամբ, որ նրանց ձեռքերում է կերտվում ազգի ապագան, նրանց շնչի ներքո են հասակ առնում հայորդիները՝ իբրեւ ազնիվ սերմնահատիկ մեր ժողովրդի ազատ ու անկախ, բարօր ու առաջընթաց կյանքի եւ լուսավոր ապագայի: Դարերի հոլովույթում մեր վանական համալիրների հովանու ներքո հիմնվել են դպրոցներ, համալսարաններ ու գրադարաններ, ծաղկել են հազարավոր ձեռագիր մատյաններ՝ լուսավորելու հայ կյանքը գիտության ձեռքբերումներով: Եկեղեցու հոգածությամբ տարբեր ժամանակներում բազմաթիվ անհատներ կրթություն են ստացել նաեւ արտերկրի հռչակավոր համալսարաններում՝ հետագայում իրենց վաստակով համալրելով ազգի մեծերի բույլը: Այսօր էլ Հայոց Եկեղեցին թե հայրենիքում, թե սփյուռքում ջանում է իր զորակցությունը բերել կրթության եւ գիտության զարգացման սրբազան գործին:

«Խրատ ձեռք բերեք եւ ոչ թե արծաթ, գիտություն, քան թե ընտիր ոսկի: Իմաստությունը լավ է անգին քարերից, եւ թանկարժեք ոչ մի բան չի հավասարվի նրան» (Առակաց Ժ 11),– պատգամում է Սուրբ Գիրքը: Այս ճշմարտությամբ է առաջնորդվել մեր ազգը պատմության անգամ ամենածանր եւ ողբերգական շրջաններում՝ աննվազ պահպանելով սերն ու ձգտումը լուսավորության հանդեպ՝ հայոց մտքի ստեղծած գոհարների եւ անգամ մեկ ձեռագրի փրկությունը դիտարկելով իբրեւ երաշխիք ազգի հարատեւության:

Կրթության ասպարեզի սիրելի՛ մշակներ, ազնվագույն ու ամենապատվական ծառայությունն է, որ բերում եք մեր ժողովրդին, որովհետեւ ձեր կողմից սերմանված արժեքներն ու փոխանցված գիտելիքներն են ձեւավորում մեր ժողովրդի ազգային դիմագիծը, պայծառացնում հոգու տաճարը՝ հանուն աշխարհասփյուռ հայ կյանքի առաջընթացի: Այս իմաստով խիստ կարեւոր է ձեր նախանձախնդիր, համբերատար եւ հետեւողական աշխատանքը յուրաքանչյուր մանուկի, պատանու եւ երիտասարդի հետ՝ նրանց հոգեկերտվածքի մեջ տեսնելով նոր լուսավորիչների, մաշտոցների, վարդանների, թումանյանների, կոմիտասների, մանթաշյանների, անդրանիկների եւ մոնթեների:

Այսօր աշխարհում նկատելի են ազգայինի ու ավանդականի կարեւորությունը նվազեցնելու, ժողովուրդների կյանքում դարերով բյուրեղացած ընկալումները խեղաթյուրելու միտումներ, որոնք նոր մարտահրավեր են նետում նաեւ մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործին: Ձեր ամենօրյա աշխատանքի եւ նախանձախնդրության շնորհիվ է, որ կարող պիտի լինենք զերծ պահել մեր երկիրը ազգային ու հոգեւոր մեր ինքնությանը ոչ հարիր, անցանկալի երեւույթներից:

Մեր Եկեղեցում այս տարին հռչակված է որպես Ընտանիքի տարի՝ նպատակ հետապնդելով տարբեր ձեռնարկների եւ նախաձեռնությունների միջոցով ընդգծելու ընտանիքներում ճշմարիտ ազգային, ավանդական արժեքների զորացման, մանուկների հայեցի դաստիարակության եւ կրթության կարեւորությունը:

Շարունակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով

Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում կրթության ոլորտի բոլոր պատասխանատուներին, մանկավարժներին ու դասախոսներին, աշակերտներին եւ ուսանողներին:

Այսօր վերստին բացվում են դռները հայրենի ուսումնական հաստատությունների, բացվում են դռները հայ գրի եւ դպրության ազգային դարբնոցների:

Մեր ժողովուրդը բոլոր ժամանակներում առանձնահատուկ կարեւորություն է ընծայել գիտելիքին ու դպրությանը՝ աստվածապարգեւ հայոց այբուբենի յուրաքանչյուր տառը դիտարկելով հայոց ինքնության պահպանության կոչված զինվոր եւ դպրոցը՝ որպես ազգի հարատեւման անխորտակելի ամրոց:

Կրթության ոլորտի սիրելի՛ մշակներ, երախտարժան առաքելություն եք դուք իրականացնում մեր երկրի կյանքում՝ գիտելիքի հանդեպ ձեր հոգու սերն ու նվիրումը փոխանցելով ձեր սաներին՝ ամուր եւ անհոգնաբեկ ջանքերով ծաղկուն պահելով մեր կրթօջախները: Այս նվիրական օրը ուժ եւ եռանդ ենք մաղթում ձեզ՝ սահակ-մեսրոպյան ոգով եւ ներշնչումով շարունակելու բարի ներդրում բերել կրթության եւ դաստիարակության ասպարեզում:

Սիրելի՛ աշակերտներ եւ ուսանողներ, մեր ժողովուրդը մեծ սպասումներ ունի ձեզանից: Մեր հորդորն ենք բերում ձեզ, որ քաջեռանդ ու հետեւողական լինեք ուսման մեջ՝ ձեր միտքն ու հոգին բացելով իմացության լույսի առջեւ, որպեսզի հասակ առնեք իբրեւ հավատավոր, լուսավոր անձեր՝ զորավոր՝ ձեր հոգով, ամուր՝ ձեր գիտելիքներով եւ նախանձախնդիր՝ հայոց աշխարհի ապահով ու երջանիկ հարազնա ընթացքի կերտման սրբազան առաքելության մեջ:

«Տերն է տալիս իմաստությունը, եւ Նրանից են բխում գիտությունն ու հանճարը» (Առակ. Բ 6),– ասում է Սուրբ Գիրքը: Աղոթում ենք, որ բարին Աստված առատապես օրհնի ու շնորհազարդի ձեզ՝ ընթանալու աստվածահաճո ճանապարհներով եւ ձեզ փոխանցված գիտելիքը ծառայեցնելու ի բարին:

Թող Բարձրյալի հովանու ներքո նոր ուսումնական տարին արգասավորվի նորանոր ձեռքբերումներով՝ ի պայծառություն մեր հայրենիքի եւ ի զորացումն հայոց կյանքի:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը

Սկիզբը՝ էջ 1

Ավանդականն ու ազգայինը մեր ինքնության ու դիմագծի այն ամուր հիմքն են, որի վրա միայն խարսխված պիտի լինի նոր ժամանակներին համահունչ 21-րդ դարի ազգային մեր առաքելությունը:

Սիրելիներ, գիտական մտքի աննախադեպ զարգացման մեր օրերում մեր ժողովուրդը առավել, քան երբեւէ կրթության ու գիտության ասպարեզում պետք է կարողանա աշխարհին համաքայլ ընթանալ եւ ի հարկի իր ձեռքբերումներով անգամ ավելին անել՝ ի զորու լինելու ապահովելու հայրենի մեր երկրի խաղաղ, անվրդով ու ծաղկյալ կյանքը, իրականացնելու մեր ազգային իղձերն ու դարավոր ձգտումները:

Այս առումով կրթության մշակներիդ երախտարժան գործի բարձր գնահատանքով՝ Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված՝ հայցելով Տիրոջ առատ օրհնությունները Ձեզ՝ անսպառ եռանդով, անմնացորդ նվիրումով եւ պատասխանատվությամբ շարունակելու մեր զավակների կրթության եւ լուսավորության աստվածահաճո ծառայությունը:

Թող ամենողորմ Աստծու հովանին, օրհնությունն ու առատ շնորհները անպակաս լինեն ձեզանից: Թող Տերը խաղաղության ու պայծառության մեջ պահի հայրենի մեր պետությունը եւ պարգեւի աշխարհասփյուռ մեր ժողովրդին հաջողություններով առլեցուն բարօր կյանք:

Բարի երթ ուսումնական նոր տարեշրջանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մասնակցեց «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի ուսումնական տարվա բացմանը

Սեպտեմբերի 1-ին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցում, նախագահությամբ դպրոցի հիմնադիր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ 2019–2020 թթ. ուսումնական տարվա բացման հանդիսավոր արարողությունը:

Տերունական աղոթքից, ՀՀ պետական եւ դպրոցի օրհներգերից հետո ներկաներին ողջունեց դպրոցի տնօրեն տիկ. Սուսաննա Վարդանյանը՝ բարի երթ մաղթելով առաջին դասարանցիներին եւ նոր նվաճումներ ու ձեռքբերումներ ուսումնական գործընթացում:

Հյուրերի անունից ներկաներին ողջունեց դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամ, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ տիար Մխիթար Հայրապետյանը՝ աշակերտներին կոչ անելով ամեն ժամ բազմապատկել իրենց գիտելիքները եւ միշտ պատրաստակամ լինել իրենց իմացությունը հարստացնելու:

Հանդիսության ընթացքում իր սրտի խոսքն ասաց նաեւ դպրոցի տեսուչ Զաքարիա ծ. վրդ. Բաղումյանը՝ շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ամենօրյա ուշադրության համար՝ ընդգծելով, որ «Էօրնեկեանցին» պետք է տարբերվի իր համակողմանի արժեքային համակարգով, գիտելիքներով, բարձր պատասխանատվությամբ եւ նկարագրով: Ապա տեսուչ հայր սուրբը հրավիրեց Վեհափառ Հայրապետին՝ իր հայրական օրհնությունը բաշխելու ներկաներին:

Նորին Սրբությունը, շնորհավորելով ամենքին՝ նոր ուսումնական տարվա առիթով, հույս հայտնեց, որ այն կդառնա բազմակողմանի գիտելիքների ամբարման, նորանոր ձեռքբերումներով եւ հաջողություններով լի մի շրջան: Վեհափառ Հայրապետը նաեւ բարձր գնահատեց տեսչի, տնօրինության եւ ուսուցիչների շնորհակալ աշխատանքը՝ ուրախությամբ արձանագրելով, որ նրանք ջերմեռանդությամբ եւ ապագայի հանդեպ աներեր հավատով ու հույսով շարունակում են մատաղ սերնդի դաստիարակությունն ու անանց արժեքներով նրանց միտքը կրթելու սրբազան առաքելությունը:

Վերջում Նորին Սրբությունը դիմեց աշակերտներին՝ ասելով. *«Սիրելի՛ «էօրնեկեանցիներ», ամենքիդ էլ քաջ հայտնի է Հայրապետիս անսահման սերն ու կապվածությունն այս կրթօջախի եւ հատկապես ձեր հանդեպ, քանզի ձեզանից յուրաքանչյուրն իր ուրույն տեղն ունի իմ սրտում եւ հոգում: Գաղտնիք չէ, որ մեր երկնառաք աղոթքներում մշտապես հայցում ենք Տիրոջ իմաստությունն ու օրհնությունը ձեզ համար, որպեսզի ճիշտ եւ նպատակային օգտագործեք ձեր ժամանակն ու շնորհված հնարավորությունները՝ արդարացնելով ինչպես մեր, այնպես էլ ձեր ծնողների եւ ուսուցիչների երազներն ու սպասումները: Ուստի զորացեք գիտության լույսով, առավել աշխատասիրությամբ ու նվիրումով սերտեք տրված դասերն ու հանձնարարականները՝ միշտ բարձր պահելով «էօրնեկեանցու» պատիվն ու մեր Եկեղեցու անունը»:*

Հանդիսության ընթացքում գեղարվեստական հայտագրով հանդես եկան դպրոցի երգչախումբն ու պարախումբը:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

2 սեպտեմբերի Ձալցբուրգի համալսարանի ներկայացուցիչներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Ձալցբուրգի համալսարանի (Գերմանիա) Քրիստոնյա Արեւելքի հետազոտությունների կենտրոնի տնօրեն, դոկտ., պրոֆեսոր Յասմին Դում-Թրագուտին եւ համալսարանի դասախոսական կազմի ներկայացուցիչներին:

Պրոֆ. Յասմին Դում-Թրագուտը Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց, որ Հայաստան իրենց այցի առիթը «Հայրենիքից հեռու, հայրենիքում. հայ ռազմիկների ճակատագիրն Առաջին աշխարհամարտում» ցուցադրության բացումն է եւ համանուն պատկերագրքի շնորհանդեսը: Ցուցադրության հեղինակն իր խոսքում շնորհակալություն հայտնեց ընդունելության համար՝ նշելով, որ համալսարանական խմբի անդամներից յուրաքանչյուրն իր ներդրումն ունի այս գործում եւ հետաքրքված է հայագիտական ուսումնասիրություններով:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց հյուրերին՝ մասնավորապես գնահատելով պրոֆ. Յասմին Դում-Թրագուտի երկար տարիների հայագիտական գործունեությունը: Վեհափառ Հայրապետն ուրախություն հայտնեց ցուցադրության բացման առիթով՝ նշելով, որ դա այն յուրահատուկ սիրո վկայությունն է, որ ունի նշանավոր հայագետը հայ ժողովրդի հանդեպ: Այս առումով Նորին Սրբությունը կարեւորեց նաեւ համալսարանի ներկայացուցիչների ներկայությունը Հայաստանում եւ նրանց հետաքրքրությունը հայոց պատմության ու մշակույթի հանդեպ:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ եկեղեցականների պատրաստության, ինչպես նաեւ արտերկրի բարձրագույն կրթական հաստատություններում եկեղեցականների հետագա ուսումնառության մասին: Նորին Սրբությունը գոհունակությամբ արձանագրեց, որ Սուրբ Էջմիածնի միաբաններն իրենց բարձրագույն կրթությունը շարունակում են Եվրոպայի, Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Եգիպտոսի եւ այլ երկրների նշանավոր համալսարաններում եւ քույր Եկեղեցիների հոգեւոր հաստատություններում, ինչը նպաստում է նաեւ փոխճանաչողությանը եւ տարբեր Եկեղեցիների հետ կապերի առավել սերտացմանը:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւս մեկ անգամ իր գնահատանքը հայտնեց ցուցադրության կազմակերպման առիթով՝ հայցելով, որ Տերը օրհնի եւ արդյունավորի գիտնականների հետագա գործունեությունը:

5 սեպտեմբերի Բուենոս Այրեսի Մխիթարյան վարժարանի սաներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Բուենոս Այրեսի (Արգենտինա) Մխիթարյան վարժարանի 11-րդ լսարանի սաներին՝ ուղեկցությամբ Հայաստանի Մխիթարյան կենտրոնի տնօրեն Եղիա ծ. վրդ. Քիլաղայանի:

Նորին Սրբությունն իր հայրական սերն ու օրհնությունը բերեց հայորդիներին՝ ուրախություն հայտնելով համայն հայության նվիրական հոգեւոր կենտրոն այցելելու առիթով: Վեհափառ Հայրապետը վարժարանի սաներին ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմությունը, խոսեց հայ ժողովրդի կյանքում Սուրբ Էջմիածնի կարեւոր դերակատարության մասին՝ հաստատելով, որ Մայր Աթոռը Աստծո կողմից հայ ժողովրդին տրված շնորհ է, եւ քրիստոնեական հավատքի շնորհիվ հայորդիները կարողացել են հաղթահարել պատմության ընթացքում իրենց բաժին հասած բոլոր փորձությունները: Ըստ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Սուրբ Էջմիածինը հայ ժողովրդին մշտապես առաջնորդել է փրկության ուղիով:

Նորին Սրբությունը վերհիշեց նաեւ Արգենտինա կատարած հովվապետական այցելության շրջանակներում իր այցը Մխիթարյան վարժարան, գնահատանքով խոսեց կրթական հաստատության բարերարների ազգօգուտ եւ մարդասիրական ծառայության մասին:

Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց վարժարանի սաներին, որ որտեղ էլ ապրեն, կարողանան զգալ Սուրբ Էջմիածնի զորությունն ու օրհնությունն իրենց կյանքում, ներշնչվեն հայ ժողովրդի հերոսական պատմության դրվագներով, հայկական հոգեւոր եւ մշակութային արժեքներով:

Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետը պատասխանեց նաեւ պատանիներին հետաքրքրող հարցերին, որոնք վերաբերում էին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգեւոր ծառայությանը եւ Հայաստանյայց Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների հարաբերություններին:

Վերջում Նորին Սրբությունը սաներին մաղթեց բարի կեցություն, ուրախ եւ հոգեւոր ապրումներով լեցուն օրեր Հայաստանում:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորագիրը Արցախի ժողովրդին՝ Հանրապետության օրվա առիթով

Սեպտեմբերի 2-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական ուղերձ է հղել Արցախի Հանրապետության նախագահ տիար Բակո Սահակյանին եւ հավատավոր ժողովրդին՝ Հանրապետության օրվա առիթով:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք հղում Ձեզ՝ Լեռնային Ղարաբաղի պետական այրերին եւ մեր ողջ հավատավոր ժողովրդին՝ Արցախի Հանրապետության օրվա առիթով:

Արդեն 28-րդ տարի անընդմեջ ազգովի տոնախմբում ենք պատմական անարդարությունների դեմ նորագույն շրջանում հայ ազգի հաղթանակն ազդարարող՝ Արցախի անկախության հռչակման տարեդարձը: Տոնում ենք արդար հպարտությամբ հաղթությունը մեր զավակների հերոսական պայքարի, որի շնորհիվ Արցախը դարձավ համայն մեր ժողովրդի ազատ ու արժանապատիվ կյանքի նոր հույսերի փարոսը: Պատերազմական դժվարին տարիներին մեր ժողովրդի զավակների հեղած արյամբ նվիրագործվեց արցախյան հողը, որի երջանիկ ու անվրդով կյանքի համար տակավին հարկադրված ենք պայքարել՝ երբեմն անգամ մեր զավակների կյանքի գնով:

Բարձր ենք գնահատում խիզախ ոգին ու նվիրումը արցախաբնակ մեր զավակների, հայրենի սահմաններն անառիկ պահող մեր քաջարի զինվորների, որոնց հանձնառության շնորհիվ զորեղ ու լավատես են նաեւ աշխարհասփյուռ հայոց հոգին եւ կյանքը:

Ադրբեջանի բռնությունից ազատագրման այս օրը վերստին հաստատում ենք մեր Սուրբ Եկեղեցու զորակցությունը Արցախին եւ նրա բարեսեր ժողովրդին: Հայոց Եկեղեցին իր օրհնությամբ եւ ողջ ներուժով շարունակելու է սատարել հայրենի պատմական հողի վրա վերականգնված ազատ ու անկախ պետականության ամրապնդման սրբազան առաքելությանը: Դրա անուրանալի վկայությունը նաեւ հոգեփրկչական օրհնաբեր գործունեությունն է Արցախի թեմի, որի հիմնադրման 30-ամյա տարեդարձը նշանավորվեց Ստեփանակերտի նորակառույց Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցու օծումով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր հայցն ենք առ Աստված բարձրացնում, որ երկնավոր Տերը զորակից լինի Արցախի մեր հերոս ժողովրդին՝ պարգեւելով աննկուն կամք ու ոգի՝ հաղթահարելու պարտադրյալ պատերազմի բոլոր դժվարությունները: Թող բարձրյալ Տերը խաղաղ ու անսասան պահի Արցախ աշխարհը, շեն ու պայծառ՝ արցախահայության կյանքը»,– ասված է Վեհափառ Հայրապետի շնորհավորագրում:

Եկեղեցին որպես ընտանիք եւ կենսագործունեության օրակ

Բոլսվերտ Սխելտե Ադամս (1581–1659), «Սուրբ ընտանիք», ՀԱՊ

«Քեզ գրում եմ այս բանը, որովհետեւ հույս ունեմ, որ շուտով կգամ: Իսկ եթե ուշանամ, դու կիմանաս, թե ինչպես պետք է վարվես Աստծու տան մեջ, որ կենդանի Աստծու եկեղեցին է՝ սյուն եւ հաստատություն ճշմարտության» (1 Տիմոթ. Գ 14–15):

Աստվածաշնչում բազում են վկայություններն ու զուգահեռները «եկեղեցի» եւ «ընտանիք» հասկացությունների, ինչպես նաեւ դրանց գործառույթների եւ հարաբերակցության վերաբերյալ: Բովանդակային առումով եւ ոչ պատահականորեն այս երկու հիմնարար ինստիտուտները երբեմն-երբեմն նաեւ բառացիորեն նույնանում են (հմմտ. Մատթ. ԺԸ 20, Գաղ. Զ 2), քանի որ երկու դեպքում էլ խոսքը միմյանց եւ Աստծո հետ հաղորդակցության, սիրո եւ հոգեւոր առաքելության (հմմտ. Մատթ. ԺԹ 6, Հովհ. ԺԳ 35) եւ վերջնաարդյունքում երկնային արքայությանն անդամագրվելու մասին է (Ա Տիմ. Դ 1–8, Եբր. ԺԳ 4, Հայտ. Զ 9–11): Հետաքրքրական է Աստվածաշնչի ուղիղ անդրադարձը, երբ Եկեղեցու կարեւոր դերակատարությունը բացատրվում է ընտանիքի օրինակով, իսկ հատկորոշելու համար ընտանիքի կարեւորությունը՝ տրվում է Եկեղեցու օրինակը. «Մարդի՛կ, սիրեցե՛ք ձեր կանանց, ինչպես որ Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր անձը մատնեց նրա համար» (*Եփես. Ե 21–33, տե՛ս նաեւ Մատթ. ԺԹ 6, Ա Հովհ. Դ 21, Ա տիմ. Ե 8*): «Այսպես եւ ինչպես որ յուրաքանչյուր հավատացյալ անհատ թե՛ բաղկացուցիչ եւ թե՛ գործունյա անդամ է յուր եկեղեցում (Ա Կոր., ԺԴ 12. Բ Կոր., ԺԲ 12), այնպես էլ յուրաքանչյուր եկեղեցի բաղկացուցիչ եւ գործունյա տարր է Աստուծո արքայության: Անհատով է իրականանում եկեղեցին, եւ եկեղեցով է իրականանում Աստուծո արքայությունը, ինչպես չի կարող եկեղեցի լինել առանց անհատների, այնպես էլ չի կարող Աստուծո արքայությունը լինել առանց եկեղեցիների… Այդպես եւ Աստուծո արքայությունն իրականացնում է մարդու կոչումը յուր եկեղեցով… Այս է նաեւ մարդկային պատմության բնական ընթացքը, ըստ որում՝ միացեղ, միալեզու, միաբնույթ եւ պատմականապես միակենցաղ անհատներից կազմվում է ազգը, որ հառաջ է գնում անհատների աշխատանքով, եւ որի շնորհները վայելում է յուրաքանչյուր անհատ, հապա որոշ ազգերից կազմվում է ամբողջ մարդկություն, որը հառաջադիմում է ազգերի հառաջադիմությամբ, եւ որի հառաջադիմության արդյունքները վայելում են եւ առանձին ազգերը: Հետեւաբար աշխարհի ընթացքը անհատական հիմքի վրա է հաստատված. այդպես է եւ Աստուծո արքայությունն, որի հիմք կազմող անհատը հավատացյալն է ու յուրաքանչյուր եկեղեցի, եւ որի շնորհները ստանում է անհատը յուրաքանչյուր եկեղեցով: Ազգությունն ու եկեղեցու ազգայնությունը անխզելի տարրեր են տիեզերական կյանքի մեջ» (*Արշակ Տեր-Միքելյան, «Հայաստանյայց Սուրբ եկեղեցու Քրիստոնեականը» – Ս. Էջմիածին 2007 թ. էջ 261–262*): Նկատի ունենալով սույն դիտակետը՝ փաստելի է, որ.

1. Ընտանիքը (*հմմտ. Մատթ. Ե 48, Զ 7–8, Գործք ԺԷ 26, 29, 1 Պետ. Ե 7*) սկզբնավորվում է Աստծո օրհնությունից:

2.Աստված աշխարհն ստեղծել է որպես մեկ միասնական ընտանիք, որի կենտրոնը մարդն է (*հմմտ Ծննդ. Ը 21, Թ 37, Ղուկ Գ 38, Ա Թես. Դ 6–7*):

3. Ամեն անգամ, երբ մարդը, բաժանվելով իր հայրական ընտանիքից, սուրբ Խորհրդով նոր ընտանիք է կազմում, «երկուսը մի մարմին են դառնում» (Ծննդ Բ 22, 24), մի նոր ընտանիք է ձեւավորվում երկնային արքայության մեջ (*Ա Տիմ. Դ 1–8, Եբր. ԺԴ 4*):

4. Եկեղեցու առաքելության անբաժան մասն են մարդկության՝ իբրեւ մեկ միասնական ընտանիքի փրկագործումն ու Աստծո արքայության իրագործումը, որոնց վերջնական կատարումը հավիտենական կյանքն է:

5. Քրիստոնեական հավատքը եւս ներկայացնում է միայն մեկ (Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցին) ընտանիք, որի գլուխն Ինքը՝ Քրիստոսն է (*Եփես. Ե 23, Կողոս. Ա 18), հիմքը՝ ուղղափառ հավատքի դավանությունը (Մատթ. ԺԶ 16–19*):

6. Ընտանի՛քն է այն դարբնոցը, որը կոչված է կենսականացնելու Աստծուց պարգեւ տրված արարչագործելու շնորհն ու շարունակական իմաստով ապահովելու հոգեւոր անվտանգությունը (*Ծննդ. Բ 21, Ե 3, Սաղմ. ԿԱ 7, Հովհ. ԺԶ 21, Եփես. Ե 33*):

Ուրեմն՝ ընտանիք է Եկեղեցին, կամ այլ խոսքով՝ Եկեղեցին Աստծո ընտանիքն է (*հմմտ. Հովհ. Ժ 30, Ղուկ. ԻԲ 42*): Քանի որ մարդկանց՝ Աստծո հետ միանալով է, որ իրականանում է Աստծո արքայությունը (*Գաղ. Բ 20, Հռ. 6. 10, 2 Կոր. 6. 16, 14. 4*): Այս սկզբունքը միանգամայն ըմբռնելի է, որովհետեւ մարդու կոչումն էլ Աստծո հետ հաղորդակից լինելն է, ինչպես գրում է Սուրբ Եղիշեն. «Միշտ Աստուած ինքն ընդ իւր, միշտ հաւատացեալ՝ ընդ նմա Աստուած»: Իսկ ս. Վարդան Մամիկոնյանն ասում է. «Մեք թէպէտ եւ մարմնով յերկրի եմք, այլ հաւատովք յերկինս եմք շինեալ» (*Եղիշե, 79) (նույն տեղում, էջ 175, 264*):

Եկեղեցու ընտանեկան բնույթի ու դերակատարության մասին է ասվածաշնչական «Ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես եւ Քրիստոսով ամենքը պիտի կենդանան» (*հմմտ. Ա Կոր. ԺԶ. 21, 22, Բ Կոր. Զ 14–15*) անդրադարձը: Այս դիտակետից հիշարժան է, որ եւ նախամարդու, եւ Քրիստոսի օրինակատարությունն ու հաղթանակը մեր օրինակատարությունն են, մեր արդարությունն ու հաղթանակը (*հմմտ. Մատթ. Գ 15, Զ 17, Եբր. Ժ 7, Հովհ. ԺԵ 33*): Հայր Աստված Քրիստոսով հայում է մեզ, որովհետեւ Քրիստոս մեր նախահայրն ու գլուխն է, մենք՝ Նրա ժառանգները (այս սկզբունքով պայմանավորված է, որ եկեղեցական ընտանիքի անդամների՝ հայրերի, հայրապետների ու սրբերի բարեվաստակ ձեռքբերումները մերն են համարվում):

Շարունակությունը՝ էջ 5

Արհեստի դերի կարեւորումը Ղ. Աղայանի «ԱՆԱՀԻՏ» հեքիաթում

Այոց մշակութային արժեհամակարգում դիպակը (ոսկեթել կամ արծաթաթել մետաքսյա նուրբ գործվածքը) կարեւոր նշանակություն ունի: Դիպակագործությունը հարուստ է խորհրդապատկերային համակարգով, գրավիչ գունային երանգներով, պատմության եւ մշակույթի արտացոլման յուրօրինակությամբ: Դիպակագործությանը հատուկ որոշ առանձնահատկություններ կան նաեւ գորգագործության մեջ: Դիպակներում եւ գորգերում հանդիպում են հատուկ զարդապատկերներ, խորհրդապատկերներ, որոնք երբեմն ծածկագրերի նշանակությամբ են կիրառվում: Արհեստի այս տեսակներին թերեւս հատուկ է արվեստի գործերը դրանցում պատկերագրելու յուրահատկությունը:

Այս ուսումնասիրության մեջ մենք քննության նյութ ենք դարձրել ազգային արժեք ներկայացնող դիպակը, որը հայ առաջին հեքիաթագիրներից մեկի՝ Ղազարոս Աղայանի (1840–1911) «Անահիտ» նովելային հեքիաթում միանգամայն այլ նշանակությամբ է հանդես գալիս: Հեքիաթը՝ որպես գրական ժանրատեսակ, Աղայանի տարերքն էր թերեւս այնքանով, որ նա հեքիաթ էր գրում ոչ միայն փոքրերի համար, այլեւ մեծերին եւս կոչ անում, որ կարդան դրանք. «Իմ նպատակն է եղել՝ հեքիաթով հեքիաթական աշխարհը մտցնել երեխային եւ այդ աշխարհում կրավորական դեր չտալ նրան, այլ ներգործական, որ երեխան իր երեւակայությամբ մտնե հերոսի դերի մեջ, այն անե, ինչ որ հերոսն է անում, նրա պես քաջասիրտ լինի, նրա պես անվեհեր, նրա պես հնարագետ, նրա պես վեհանձն եւ ազնիվ» (*Աղայան Ղ., Երկերի ժողովածու չորս հատորով, հ. 3, Եր., 1963, էջ 213*):

Ավելի ուշ ամերիկացի հոգեբան Բրունո Բիթելհեյմը նույն միտքն էր արտահայտելու՝ գրելով. «Մանկական ստեղծագործությունն առհասարակ ու հեքիաթը մասնավորապես լավագույն միջոցն են, որ երեխան գեղարվեստական ստեղծագործության տիրույթում հանդիպադրվի կյանքի կերպափոխված դժվարություններին, կյանքում առաջին անգամ հարաբերվի հնարավոր դաժանություններին եւ փորձություններին, հերոսի արարքներից ու քայլերից դաս քաղի» (Beetelheim B., The uses of enchantment, New York, 1976, էջ 8): Աղայանական հեքիաթների աշխարհը՝ որպես ժողովրդական բանահյուսության հարուստ նյութի եւ հեղինակային լուծումների ձույլ ամբողջություն, բովանդակային տարբեր նրբերանգներով երեխայի հոգեբանության, երեւակայության, ստեղծագործական ունակությունների դրսեւորման եւ զարգացման հնարավորություն է ընձեռում: Շեշտադրելով հեքիաթի՝ բարոյական եւ մտավոր զարգացմանը նպաստող դերը՝ Աղայանն այս ժանրատեսակը համեմատում էր երեխային սնուցող մայրական կաթի հետ: Գրողի հեքիաթների հերոսները խտացնում են համամարդկային կարեւոր արժեքների համար պայքարող մարդ տեսակի նկարագիրը: Նրանք ուսման, արհեստի, աշխատանքի նկատմամբ հատուկ վերաբերմունք ունեն: Մանկական գրականությունը, մասնավորապես հեքիաթի ժանրը, երեխաների իմացական եւ զգայական դաշտերի վրա ազդեցիկ ներգործություն ունենալու մեծ հնարավորություն է տալիս: Հեքիաթի բովանդակության ճիշտ ընկալումը կրթադաստիարակչական մեծ ազդեցություն կարող է ունենալ մանուկ հասակից երեխայի ճիշտ դաստիարակության համար: Գեղարվեստական գրականությունը երեւակայական իրականության տիրույթ է ստեղծում, որտեղ յուրաքաչյուրը կարող է գտնել իրեն եւ դառնալ հերոս: «Հեքիաթը դառնում է իրականության անծանոթ կամ քիչ ծանոթ տարբեր երեւույթները ճանաչելու եւ դրանք հասկանալու բանալի» (*նույն տեղում*): Հեքիաթը, որպես ժողովրդական բանավոր արձակ ստեղծագործություն, կոչված է ծառայելու հիմնական ունկնդիրների գեղարվեստական պահանջմունքների բավարարմանը (*տե՛ս Чистов К. В., К вопросу о принципах классификации жанров устной народной прозы: VII Международный конгресс антропологических и етнографических наук, (Москва, август 1964 г.), էջ 5–7*):

«Անահիտ» հեքիաթում դիպակը, իր առաջնային նշանակությունից զատ, դառնում երկխոսության միջոց՝ փորձության մեջ գտնվող թագավորի կյանքը փրկելու համար: Հեքիաթի ժանրն ուսումնասիրության տարբեր գիտակարգերի համար լավագույն հնարավորությունն է տալիս: Այն թերեւս ազգային մշակույթն ու հոգեբանությունը բացահայտելու լավագույն տարբերակներից մեկն է:

Գեղարվեստական յուրօրինակ հնարանքով Աղայանը կարողացել է ներկայացնել հերոսների երկխոսությունը դիպակի միջոցով, իսկ դրա վրա գրված Վաչագան թագավորի ծածկագիր-հաղորդագրությունը դարձրել դիպաշարային գործողությունների հետագա ընթացքն ապահովող միջոց: Հեքիաթի գլխավոր հերոսուհին՝ Անահիտը, որը նախրչու (տավարածի) աղջիկ էր, կարեւորում է արհեստին տիրապետելը եւ թագավորի որդու ամուսնության առաջարկն ընդունում է միայն որեւէ արհեստ սովորելու պայմանով: Մտավոր եւ աշխատանքային դաստիարակության մասին Աղայանի մոտեցումներն ու տեսությունները բավականին հաջողված են: «Արհեստը մի այնպիսի բան է, որ ամենայն մարդ պիտի գիտենա թե ծառա լինի, թե թագավոր, թե իշխան» (*Աղայան Ղ, Երկերի ժողովածու չորս հատորով, հ 2, Եր, 1962, էջ 130*) տեսակետը բոլոր ժամանակների համար էլ արդիական է եւ կենսական կարեւորություն ունի: Հեքիաթում արհեստի ուսուցման գործնական նշանակությունը խիստ կարեւորելով՝ գրողը փորձում է վաղ մանկությունից երեխայի մեջ աշխատանքի նկատմամբ սեր արթնացնել: Աղայանը երեխաների ճիշտ դաստիարակության, աշխարհայացքի ձեւավորման ուղիներ էր մատնանշում:

Շարունակությունը՝ էջ 4

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՉԵՌՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ



Սկիզբը՝ թիվ 14–16

Իսկ ինչն արդեն վերաբերում է Հայոց շարժական տոմարում վերադիրների խնդրին, պետք է արձանագրել, որ վերադիրը հայոց շարքում լուսնի հասակն է՝ շարժական տոմարի նախորդ տարվա վերջին օրը՝ Աւելեաց 5-ին: Նշենք, որ վերադիրների համակարգն առկա է հայոց «Պատճէնների» խմբագրություններում (*տես ՄՄ Հմր 1999, թ. 3 բ–4 ա, 192 բ. 3082, թ. 379 բ*): Աւելեաց 5-ին Լուսինը եղել է Գ (3) օրական, որը դարձել է հայոց մեկ թվականի վերադիրը: Ի տարբերություն Հուլյան տոմարի վերադիրների շարքի՝ Հայոց շարժական տոմարում վերադիրների համակարգը չունի 19-ամյա պարբերականություն. սրա պատճառի մասին կխոսենք ստորեւ: Հենց այդ պատճառով է, որ Անանիա Շիրակացին սահմանել է կանոն, որի համաձայն՝ հայոց թվականը բազմապատկվում է 11-ով, արտադրյալից հանվում է 8 հանապազորդը, ապա՝ նահանջի համարը, հետո պետք է գումարել 19-երյակի համարը, եւ կստացվի վերադիրը: Վարդանյանը կարծում է, որ հիմնական կանոնից է ածանցվում յուրաքանչյուր նահանջի տարում 10, 19-ամյակի վերջին տարում 12 գումարելու յուրահատկությունը, իսկ եթե նահանջի տարին ու 19-ամյակի վերջին տարին համընկնեն, պետք է գումարել 11 (*տես Վարդանյան Ռ., Անանիա Շիրակացւոյ (Շիրակունւոյ) համարողի ՇԼԲ կարգը, էջ 238*): Կարեւոր է նաեւ նշել, որ վերադիրը ծառայել է նաեւ միջոց՝ Լուսնի փուլերի հասակը օրվա ճշտությամբ որոշելու, որի համար պետք է իմանալ նաեւ «Ոսկե թիվը»: Իսկ գտնել տարվա «Ոսկե թիվը» նշանակում է, թե տվյալ տարին լուսնի շրջանի կամ Մետոնի հայտնաբերած 19-ամյա պարբերաշրջանի որերորդ տարին է: Նշենք նաեւ, որ Հայոց մեծ թվականի եւ Հայոց տոմարի ամիսների 532-ամյա պարբերաշրջանի համար օրացույցներ կազմելիս Շիրակացին օգտագործել է ստորեւ բերված աղյուսակում զետեղված վերադիրների համակարգը, որը որոշ չափով տարբերվում է վերադիրների մյուս սիստեմներից (*տես Բաղալյան Հ., էջ 298*):

Աղյուսակ 1

Ոսկե թվեր	1	2	3	4	5	6	7	8	9	10
Վերադիրներ	Գ	ԺԴ	ԻԵ	Ե	ԺԶ	ԻԷ	Ը	ԺԸ	ԻԹ	Ժ
Ոսկե թվեր	11	12	13	14	15	16	17	18	19	
Վերադիրներ	ԻԱ	Ա	ԺԲ	ԻԳ	Դ	ԺԴ	ԻԵ	Զ	ԺԸ	

Աղյուսակ 1-ի տվյալներից պետք է ենթադրել, որ վերադիրների այս համակարգը կազմված է հաշվի առնելով նահանջ տարիները: Հայոց տոմարում նահանջ տարիների ընթացքում 11-ի փոխարեն վերադիրը 10 է: Եվ հենց այս է պատճառը, որ, ի տարբերություն Հուլյան տոմարի վերադիրների սիստեմի, այն չունի 19-ամյա պարբերականություն:

Հաջորդ խնդիրը, որ արծարծում է Հովհաննես Կոզեռնն իր «Մեկնութիւն տոմարի» աշխատության մեջ, Է-երյակի հարցն է:

Բերենք Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» աշխատության մեջ առկա հատվածը յոթներյակի մասին. «Իսկ Է-երյակի մասին, թե ինչու է ասում Գ. (3) գումարիր կամ Դ. (4) հանիր, քանի որ նախքան Հայոց թվականը դնելը յոթներյակը Գ. (3) էր, եւ երբ (Հայոց) թվականը դրեցին, (յոթներյակը) 4 էր: Այսպես. երբ յոթներյակը հաշվես, պետք է Գ. (3) գումարել կամ Դ. (4) հանել, որ յոթներյակը լիանա (լիություն առնի), եւ դյուրությամբ կգտնվի խնդրելին: Ապա եթե կամենում ես գիտենալ, թե որտեղից է ստացվում յոթներյակը, վերցրու՛ տարվա ՅԿԵ. (365) օրերը, շաբաթները բաժանիր Է., Է. (7–7) օրերի, տարվա մնացորդները աճում են, մինչեւ լինի Է. (7), ապա կրկին առաջին է դառնում» (*տես Էլնաթյան Ջ., Տիեզերագիտության եւ տոմարի մեկնություններ, էջ 86*): Հովհաննես Կոզեռնը կանոնը բերելիս հիմնականում կրկնում է Անանիա Շիրակացուն:

Հովհաննես Սարկավագի «Պատճէն տոմարի» աշխատության մեջ այս հարցի շուրջ կարդում ենք. «Եւթներեակ այսպէս (արա). կալ զթուականն, Գ (3) ի վերայ ած կամ Դ (4) ի բաց երթ եւ զայլն երթ է (7) է (7), որ մնա՝ եւթներեակ է» (*տես Աբրահամյան Ա., Նշվ. աշխ., էջ 205*): Սակայն մի հետաքրքիր հանգամանք պետք է նկատել. ինչպես ասել ենք նախընթաց մեր խոսքում, Հովհաննես Սարկավագն անշարժացրեց Հայոց տոմարը եւ արդեն կանոններ սահմանեց Հայոց անշարժ տոմարի համար: Սակայն յոթներյակի կանոնը սահմանելիս նա հավատարիմ է մնացել եւ հիմք է վերցրել Հայոց շարժական տոմարի համար կարգված կանոնը, այլ կերպ ասած՝ նա չի խմբագրել նշյալ կանոնը: Կարծում ենք՝ պատճառն այն է, որ շատ մեծ տարբերություն չէր առաջանա Հայոց թվականը 7-ի կամ 28-ի բաժանելու դեպքում՝ մնացորդը հաշվելու կամ գտնելու խնդրով:

Հակոբ Ղրիմեցին իր տոմարի մեկնության մեջ անդրադառնում է յոթներյակին եւ արդեն մեզ ծանոթ իր հարցուպատասխանիքի ոճով հարցադրումներ անում եւ պատասխանում դրանց՝ բացատրելով տոմորական կնճիռները: Այս պարագայում նա բացատրում է, թե ինչ է յոթներյակը, թե ինչու պետք է գումարել 3 կամ հանել 4: Անդրադարձ է կատարում նաեւ այն խնդիրներին, թե որտեղից է գոյանում, թե ինչու է պետք է գումարել 3 եւ այլ հարցերի (*տես Հակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ, աշխ.՝ Ջ. Էլնաթյանի, Եր., 1987, էջ 135, 227*): Ընդհանուր առմամբ որեւէ հստակ առանձնահատկություն կամ տարբերություն չնկատելով Հակոբ Ղրիմեցու մեկնության մեջ՝ չենք միտվի դրա մանրամասն քննությանը:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր օրացուցային համակարգ ունեցել է տարվա յոթներյակը որոշելու կանոն: Հուլյան տոմարով յոթներյակը գտնելու համար պետք է Հռոմեական թվականին ավելացնել 4 (կամ հանել 3), գումարը բաժանել 28-ամյա պարբերաշրջանի վրա եւ անտեսելով քանորդը՝ վերցնել բաժանումից ստացված մնացորդը:

Շարունակությունը՝ էջ 7

Արհեստի դերի կարեւորումը Ղ. Աղայանի «ԱՆԱՀԻՏ» հեքիաթում

Սկիզբը՝ էջ 3

Հեքիաթի աշխարհն իրականության ամենաճիշտ պատկերը համարելով՝ հեղինակը փորձել է գեղարվեստական գրականությունը ծառայեցնել նաեւ ճշմարիտ դաստիարակությանը, սնել եւ զարգացնել երեխայի երեւակայությունը: Հեքիաթներում վտանգի փորձությունը, կենսական դժվարությունների հաղթահարումը իրականությունն ըմբռնելու գործնական պահանջի անհրաժեշտությամբ էին պայմանավորված: Դրանք երեխայի՝ իրական աշխարհի ճանաչողության եւ բնավորության կերտման առաջին քայլերն են: Գաղափարական այս կարեւոր խնդիրը հեքիաթագիրը գործնական կիրառության մեջ է ներկայացնում՝ միանգամայն համոզված լինելով, որ արհեստի դերն ու նշանակությունը երեխայի ինքնագիտակցության մեջ պետք է արթնացնել մանկությունից: Երեխաների դաստիարակության վեհ նպատակներին էին ուղղված նաեւ «Աղբյուր» մանկապատանեական ամսագրի տարբեր համարներում լույս տեսած հեքիաթները, որոնք առանձնանում են դիպաշարային տարբեր լուծումներով, իրենց արծարծած գաղափարների արդիական հարցադրումներով: Հեքիաթը երկու աշխարհների՝ իրական եւ երեւակայական տիրույթների միահյուսման ինքնատիպ կենտրոն է դառնում: Դիպակում, գործերում եւս ներկայացվում են այս երկու աշխարհները:

«Անահիտ» հեքիաթն իր թեմատիկ եւ բովանդակային շերտերով բոլոր ժամանակների համար արդիական նշանակություն ունի: Անահիտի՝ հայոց դիցարանի մայր աստվածուհու անունը կրող հերոսուհու կերպարում խտացված են հայ կնոջը բնորոշ ազգային յուրահատկությունները: Անահիտի համար սկզբունքային նշանակություն ունի արհեստին տիրապետելը: Այս հերոսուհու համար հատկանշական է արտաքին գեղեցկության շքեղությունը, որ ներդաշնակված է հոգու արիության եւ քաջության հետ: Նրա սկզբունքային բնավորությունը, արհեստի նկատմամբ պատճառաբանված վերաբերմունքը ստիպում են, որ թագավորի որդին եւս կարողանա տիրապետել որեւէ արհեստի: Աղայանն այս հերոսուհու միջոցով գործնականում պատճառաբանում է արհեստավորի եւ արհեստի դերն ու նշանակությունը այնպես, որ նրան սիրահարված թագավորի որդին մեկ տարվա մեջ տիրապետում է ջուլհակությանը, դիպակ գործում: Վաչագանի՝ ոսկեթելերից գործած բաճկոնացուն նվեր ստանալուց հետո Անահիտը համաձայնում է ամուսնանալ նրա հետ՝ խնամախոսներին պատասխանելով.

Երբ կանճարանա,
Ջուլհակ կըդառնա:

Ուշադրության արժանի է Անահիտի այս խոսքերի նշանակությունը, որ այս դեպքում թագավորի որդին եւս պետք է տիրապետի արհեստի. անհրաժեշտության դեպքում նաեւ արհեստավոր դառնա: Նովելային հեքիաթի հետագա զարգացումը ցույց է տալիս, որ դիպակը կարեւորություն ունի ոչ միայն իր առաջնային նշանակությամբ, այլեւ կարող է նույնիսկ դառնալ երկխոսության, օգնության կարիք ունեցող մարդու խնդրանքը տեղ հասցնելու միջոց: Սա թերեւս փաստում է, որ դիպակի համար հատկանշական է ժամանակի եւ հեռավորության տիրույթներից պատմության, մշակույթի, գիտելիքների, հավատալիքների, աղոթքների, տարաբնույթ տեղեկությունների եւ նյութական ժառանգություն փոխանցելու յուրահատկությունը: Այսպիսով, դիպակն իրադարձությունները կենցաղային իրականությունից տեղափոխում է գեղարվեստական գրականության տիրույթ:



Այն, որ ժողովրդական բանահյուսության նյութերն առաջնային աղբյուր են եղել Աղայանի համար (հատկապես Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ տեղ գտած Արտաշեսի եւ Սաթենիկի հարսանեկան ծեսի պատկերն ընդօրինակվել է հեքիաթագրի կողմից), նկատելի է նաեւ հեքիաթի չափածո հատվածներից: Տպավորիչ են հատկապես Անահիտի եւ Վաչագանի ամուսնության տեսարանի շքեղությունները, որ ներկայացված են հեթանոսական գրականությանը բնորոշ շռայլությամբ եւ առանձնակի պատկերավորությամբ: Անահիտի եւ Վաչագանի ամուսնության տեսարանն ակամայից հիշեցնում է Արտաշեսի եւ Սաթենիկի հարսանիքի դրվագը.

Անահիտի հարսանիքին ոսկի արեւ
փայլեցավ.
Անահիտի հարսանիքին ոսկի անձրեւ
թափեցավ.
Մեր արտերը ոսկի դառան, մեր հորերը
լցվեցան.
Մեր հարկերը անհետացան, մեր ցավերը
վերացան.
Շամ ապրի Ոսկեծղին՝
Մեր մայր թագուհին…

Հարսանեկան ծեսի պատկերավոր այս դրվագը ներքին գեղեցկություն, հատուկ գունավորում է հաղորդում հեքիաթին՝ ժողովրդական նյութի աղայանական մեկնությանը ներհյուսելով ավանդական տարրեր, իսկ չափածո երգեցիկ հատվածները յուրօրինակ ռիթմ են հաղորդում հյուսվածքին:

Ուսման եւ արհեստի ներդաշնակությունն Աղայանը այդկերպ է ներկայացնում: Կարող ենք հավելել, որ արհեստը կարող է ամենագործածական կենցաղային տիրույթից դառնալ գեղարվեստական պատկերավորման առարկա, երկխոսության միջոց, ազգային առանձնահատկություններ ներկայացնելու լավագույն նմուշ:

Վաչագան թագավորի եւ Անահիտ թագուհու՝ արհեստի արժեւորման եւ սեփական օրինակով բոլորին արհեստ սովորելու ցանկությամբ վարակելու, աշխատասիրությունը եւ արհեստը կարեւորելու միտումը դառնում է գովասանության եւ փառաբանության առիթ:

Շարունակությունը՝ էջ 6

ՄԿՐՏԻՉ ՆԱՂԱՇԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Սկիզբը՝ թիվ 11, 13, 15–16

Կյանքի անցողիկության պատկերումն է «Ողբ Նաղաշի վասն ննջեցելոցն» բանաստեղծությունը: Այն խոհ է կյանքի ու մահվան մասին: Բանաստեղծը ցավով է ներկա-յացնում, որ իր պատկերացումներն այն մասին, թե աշխարհը տրված էր միայն ուտել-խմելու, կյանքը սիրելու, վայելելու համար, սին ու փուչ էին, եւ որ ամեն պատկերացում ու երազանք կարող ենի չիք դառնալ մահվան շնորհիվ (Մկրտիչ Նաղաշ, Տաղեր, էջ 158).

Ես գիտէի, զաշխարհս ինձ մուլք էր տրւած,
Ուտէի, խմէի հետ իմ սիրելեաց,
Նայ մահն յանկարծակի հասաւ հետեւանց,
Չինչ թատպիր ունէի, կիսկատար մնաց:

Մինչ մահվան մասին պատկերացում ունենալը՝ կյանքը գեղեցիկ էր թվում բանաստեղծին, սիրելի, հարազատ մարդկանց հետ նա միայն վայելում էր կյանքի գույները՝ առանց գիտակցելու, որ այս աշխարհում կա մահ կոչված երեւույթը, որը կարող է բաժան-բաժան անել ամենքին ու ամեն ինչ՝ առանց վարանելու, առանց ուղղվելու եւ պատրաստվելու հնարավորություն տալու: Մահը բանաստեղծին անգամ հոգու մեղքը թեթեւացնելու եւ աղոթք անելու հնարավորություն ու ժամանակ չի տվել (*նույն տեղում, էջ 159*).

Երեկ վարդի նման ես կու փայլեի,
Սիրամարգի նման ի շուրջ կու գայի,
Իմ սիրելեացն հետ զրույց կու տայի:
Ես այս աւուրս իսկի խապար չունէի:
Ես գիտէի, թէ մարդն չի մեռանիր
Եւ աստէնի կենացս չի բաժանիլ,
Իսկի աղօթք չարի, ոչ հոգոյս թատպիր,
Նայ լեզուս կապեցաւ ի բերանս դաֆիլ:

Հոգեբանական խոր ու նուրբ մոտեցումներով Նաղաշը պատկերում է սեփական մահվան շունչը զգացող մարդու անձնական դրաման: Մարդ, որի համար ծանր է գիտակցել, որ այլեւս չի կարող տեսնել ու լսել ընկերներին, խոսել նրանց հետ (*նույն տեղում, էջ 160*).

Այ իմ սիրուն եղբայրք, հալալ արէք ինձ,
Որ կերայ հանապազ աղ ու հաց հետ ձեզ:

Դժվար է համակերպվել աչքերի լույսի խավարմանը, ճարտար լեզվի կարկամելուն, դժվար է համակերպվել նրան, որ մահվան օրը մոտ է, որ հոգիդ եւ մարմինդ պետք է բաժանվեն իրարից: Դժվար է սպասել մահվան.

«Այս իմ լուսով աչերս էր խաւարեցաւ,
Եւ իմ ճարտար լեզուս վասն էր կապեցաւ,
Մի՞ թե մեռանելոյ օրս մոտեցաւ,
Եւ հոգիս ի մարմնոյս բաժնիլ կամեցաւ»:

Տաղը շարունակվում է հոգեհանգստի նկարագրությամբ: Բանաստեղծ-հերոսը մինչեւ վերջ տեսնում է իր հոգեհանգստի արարողությունը եւ նույնիսկ կարծես թե դեռ որպես կենդանի էակ իր մասնակցությունն է ունենում: Նա քահանաներին կոչ է անում չձանձրանալ եւ արարողությունը ամբողջապես կատարել (*նույն տեղում, էջ 163*).

Հոգեւոր քահանայք, դուք մի՛ ձանձրանայք,
Զկարգս բոլոր ասէք եւ մի նեղանայք
Եւ զաշխատանքն ձեր ինձ հալալ արէք,
Ես ձեզնէ հեռացայ, դուք բարով կացեք:

Եվ վերջում բանաստեղծը կրկին հարում է կրոնականին, հոգեւորին:

Մահացողը խնդրում է իրեն պաշար դնել, իր համար աղոթք անել, սուրբ Մարիամին բարեխոսել իր համար (*նույն տեղում, էջ 163–64*).

Երկար ճամփուս պաշար պատարագ դրէք,
Աղօթք եւ աղաչանք, պաղատանք արէք,
Ըզձեզ կու աղաչեմ զիս մի մոռացէք,
Ըզկոյսն Մարիամ բարեխօսեցէք:

Այսպիսով, մահվան խնդրին նվիրված Նաղաշի բանաստեղծություններն իրենց արտահայտած գաղափարներով ձեռք են բերում համամարդկային ճանաչում ու արժեք, նրանցից շատերն անգամ դարձել են սգո երգեր: Մահը որքան էլ բոլորին հավասար է դատում, բայց ողբերգական է, քանի որ նշանակում է հեռացում այս կյանքից: Իրական կյանքն է սիրելի բանաստեղծի համար. ահա թե ինչու է նա ցավով մերժում այդ կյանքը տանջալից դարձնող արատները՝ ագահությունն ու ոխակալությունը, խրատում հեռու մնալ դրանցից:

Նաղաշի ստեղծագործությունների մեջ յուրահատուկ տեղ են գրավում օտար նվաճողների եւ ներքին տերերի հարստահարությունների, կեղեքումների հետեւանքով քայքայված, աղքատության մատնված հայ ժողովրդի մի ստվար զանգվածի՝ պանդուխտների կյանքն ու վիճակը:

Իր կյանքի եւ գործունեության ողջ ընթացքում սերտ հարաբերությունների մեջ լինելով ժողովրդական լայն զանգվածների հետ, տեղյակ լինելով աշխատավորների սոցիալական ու տնտեսական ծանր վիճակին՝ Նաղաշն անհուն կարեկցանքով է լցվում կյանքի բնականոն ընթացքից դուրս մնացած պանդուխտների նկատմամբ: Բանաստեղծը խոր կսկիծով է նկարագրում նրանց չարքաշ ու հարստահարված կյանքը, անապահով ու անպաշտպան վիճակը, հասարակական վիշտը:

«Հայ անհատական քնարերգութեան մէջ Մկրտիչ Նաղաշն առաջինն էր, որ լավագոյնս մշակած է պանդխտութեան թեման: Ան չափազանց յուզիչ ու կենդանի պատկերներով ներկայացուցած է դարիպի կեանքն ու մահը օտարութեան մէջ: Դարիպի կեանքը «լալի, ողբերգական» է, «լի տրտմութեամբ ի նեղ զնտան»» (*Հենրիկ Բախչինյան, Հայ միջնադարյան գրականություն, Երեւան, 2006, էջ 175–176*):

Հայ ժողովրդի ծննդյան օրվանից սկսած, գոյության ողջ ընթացքում եւ մինչեւ այսօր էլ, որպես հասարակական մեծագույն չարիք, պանդխտությունը կանգնած է եղել ժողովրդի ճանապարհին, անբաժան է եղել դարերի փորձություններն ու սպառնալիքները հաղթահարած ժողովրդից: Սակայն իր վաղեմությանը հակառակ՝ պանդխտությունը գրավոր գեղարվեստական գրականություն է մտնում միայն 15-րդ դարում՝ Մկրտիչ Նաղաշի շնորհիվ: Եվ թերեւս հենց այս փաստն էլ դառնում է Մ. Նաղաշի պատմական մեծագույն ծառայություններից մեկը, որ նա մատուցել է հայ գրականությանը:

Պանդխտության թեմայով Նաղաշի բանաստեղծությունները քիչ են, սակայն այդ գործերում Նաղաշը կարողացել է բացահայտել պանդուխտի հոգեբանությունը, պանդխտության հյուծիչ ազդեցությունը, կարողացել է մանրակրկիտ եւ շատ դիպուկ նկարագրել պանդուխտի չարքաշ կյանքն ու աշխատանքը, ողբերգությունն օտարության մեջ՝ հեռու հայրենիքից ու հարազատ մարդկանցից:

Առաջին հերթին Նաղաշի հերոսները աշխատավոր գյուղացիներ են, որոնք օտար նվաճողների եւ ներքին չարագործների կեղեքումների, հարստահարությունների, շահագործման ծանր լծի տակ ստիպված թողել են իրենց տունն ու հայրենի հողը եւ փորձել են օրվա հացը վաստակել պանդխտության մեջ: Այս մարդկանց կողքին Նաղաշը դնում է նաեւ այն զանգվածին, որ անընդհատ պատերազմների հետեւանքով տեղահանվել է իր երկրից, տարվել օտար երկիր եւ մնացել բախտի քմահաճույքին:

Նաղաշի նկարագրած պանդուխտը կրում է կրկնակի տանջանքներ: Նրան մի կողմից տանջում է հայրենիքի, հարազատների նկատմամբ անհուն կարոտը, մյուս կողմից՝ օրվա ապրուստ վաստակելու եւ հարազատներին էլ օգնելու հոգսը: Պանդուխտի այսպիսի չարքաշ ու դաժան կյանքն է, որ նկատի ունենալով՝ բանաստեղծը գրում է (Մկրտիչ Նաղաշ, Տաղեր, Երեւան, 1965, էջ 61–62).

Դարիպին կեանքն է լալի, ողբերգական,
Դառն ու լեղի, լի տրտմութեամբ ի նեղ զնտան,
Ցորժամ լինի օտար երկիր թափառական,
Դարիպն օտար ոչ ճանաչեն, ոչ գիտենան...

Օտարության մեջ ապրող պանդուխտի համար ոչ մի օր ուրախ ու լուսավոր չէ: Լուսավոր չէ անգամ այն օրը, որի ընթացքում չի հալածվել, չի կեղեքվել: Դառն է կերած հացը, քանի որ պանդուխտն ամեն րոպե ու վայրկյան՝ կուշտ թե սոված, քնած թե արթուն, մտքով հայրենի տանն է, հայրենի հողում, հարազատների ու մերձավորների կողքին:

Շարունակությունը՝ էջ 6

Եկեղեցին որոնես ընտանիք եւ կենսագործունեության օրակ

Սկիզբը՝ էջ 3

Խաչի վրա եւս Քրիստոս մարդկության մեղքն Իրենը համարեց, որպեսզի մենք էլ Նրա կյանքը մերը համարենք (*հմմտ. Բ Կոր. Ջ 21, Ա Պետ. Բ 24, Ես. ԿԳ 4*): Նա, խաչի վրա ոչնչացնելով մահը, անեծքն առավ (*Հռ. Գ 25, Բ Կոր. Ե 14, 15*), որպեսզի մենք օրհնություն ստանանք (*Եբր. Բ 15*). «Միաբանեցին երկինք եւ երկիր ի մահու Միածնին Աստուծոյ», ինչպես բնորոշում է Եղիշե աստվածաբանը (*նույն տեղում, էջ 202*): Ըստ որում՝ Եկեղեցու ազգային լինելու գործառույթն ամենամեծ ցանկության դեպքում անգամ դույզն-ինչ չի հակասում Քրիստոսի Եկեղեցուն (Աստվածաշունչն առլեցուն է այնպիսի դրվագներով (*հմմտ. Ծնն. ԻԴ 3, ԼԴ 14, Ելից ԼԴ 15–16, Երկր. Օր. Է 3–4, 21. Ժ–13, Դատ. ԺԴ 13–14, Բ Եզր. Ժ 10–11*), որոնց մեջ ուղղակիորեն ազգային պատկանելության դերի կարեւորություն ու ջատագովություն կա) եւ շարունակում է ներկայացնել այն: Հենց միայն այն պատճառով, որ Եկեղեցու էության հաստատությունն ու անխախտությունն ապահովվում են Սուրբ Հոգու խնամածությամբ (*Գործք. ԺԵ 28, ԺԶ 6, Եփես. Դ 4*):

Մատամ Թեոդոր (1606–1676), «Սուրբ ընտանիք», ՀԱՊ

«Սակայն յուրաքանչյուր եկեղեցի ունի յուր ազգի հետ յուր պատմական կյանքը, եւ նա նույնպես զարգանում է ըստ մարդկային հառաջադիմության, առ որ ձգտում էին եւ առաքյալներն աշխատությամբ ու նահատակությամբ (*Եփ. 4. 13, Կող. 1. 10. 2 Պետ. 3. 18*)… ինչպես որ Հայաստանյայց Ս. Եկեղեցին անհատի փրկության համար է աշխատում, եւ ինքն եւս անհատով է իրականանում ու հառաջադիմում, այնպես էլ յուրաքանչյուր ճշմարիտ հավատացյալ հայ թե՛ Հայաստանյայց Ս. Եկեղեցու մի անհրաժեշտ ու բաղկացուցիչ անդամն է եւ թե՛ անձամբ իսկ եկեղեցի է, այլեւ Քրիստոսի հետ հավատքով միացած թե՛ վեմ ու հիմք է եկեղեցու եւ թե՛ նորա հառաջադիմության նպատակ… Ուստիեւ Հայաստանյայց Ս. Եկեղեցու փառաց վառքի ժամանակ՝ «Ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ. մարմինք իւրաքանչիւր սուրբ սեղան, եւ ոգիք նոցունց՝ պատարագ ընդունելի» (Եղիշե): Հայաստանյայց Ս. Եկեղեցին, հավատարիմ մնալով յուր էության գաղափարին, ոչ թե բաժանումն է մտցնում յուր պաշտոնյաների ու յուր ժողովրդի մեջ, այլ նա վարդապետում է, որ երկուքն էլ մեկ են, եւ միայն յուրաքանչյուրը պետք է յուրովսանն իրագործե յուր կոչումն Աստուծո արքայության իրականացման համար, մեկն՝ իբրեւ պաշտոնյա եւ մյուսն՝ իբրեւ եկեղեցու մի անհրաժեշտ անդամ յուր նույնպես աստվածատուր շնորհներով: Այս սկզբունքի իրական փաստը հավատքի հանդիսում է փայլում. «Մի սիրտ յօժարութեան ամենեցուն արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց եւ ամենայն միաբանելոց ի Քրիստոս: Քանզի առհասարակ զմի զինուորութիւն զինուորեցան, եւ զմիական զրահս հաւատոց պատուիրանին Քրիստոսի, եւ միով գօտեաւ ճշմարտութեան պնդեցին զմէջս արք եւ կանայք» (Եղիշե): Հայաստանյայց Ս. Եկեղեցին յուր ժողովրդի համար միակ ճանապարհը դեպի Աստված եւ դեպի երանություն ճանաչում է, որ յուրմով է: Նորանով է թե՛ մուտքը Աստուծո արքայության մեջ, որ է ինքն իսկ, եւ թե՛ շավիղը դեպի կատարելություն, որ յուր մեջ է, ու թե պսակումը ճշմարիտ ընթացքի կատարման վրա, որ յուրմով է երաշխավորված, իսկ ճանապարհի միակ լուսատուն ու լուսավորողն է Ս. Գիրքն, որ թե՛ կրթում է Հայաստանյայց Ս. Եկեղեցու զավակներին ու թե՛ աճեցնում ու զարգացնում Աստուծո շնորհաբաշխ ձեռքի տակ. «Որք իջին յարգանդ հոգեւոր աւազանին պարգեւօք ամենասուրբ Երրորդութեան, օրհնութեամբ եւ քահանայական խորհրդեամբք, եւ ծնանին Հոգւով ի Քրիստոս լուսաւորեալ», ասում է Ս. Գրիգոր Լուսավորիչն (Հաճ.): Ուստիեւ սկզբից ի վեր ճշմարիտ հայի սկզբունքն է. «Մի է մայր մեր եկեղեցի, որ երկնեաց զմեզ, եւ մի է Հայր մեր Ս. Հոգին, որ ծնաւ զմեզ». դրոշմում է հայի ճակատին Սուրբն Հովսեփ: «Հայր մեր զսուրբ Աւետարանն գիտեմք եւ մայր՝ զառաքելական եկեղեցի կաթուղիկէ», գոչեցին եւ հավատավառ Հայրերն առմիշտ» (*նույն տեղում, էջ 302–303*): Պայմանավորված այս սկզբունքով՝ Հայ Եկեղեցին, որպես հայ ժողովրդի ավանդական արժեքների եւ ստեղծարար ոգու թարգմանն ու երաշխավորը, դարեր շարունակ իրականացրել է կրթական ու լուսավորչական գործունեություն, հիմնել մատենադարաններ, դպրոցներ ու գրչության, մանրանկարչության օջախներ, ձեւավորել քրիստոնեական արժեհամակարգի վրա խարսխված բարոյական արժեքներ ու մշակույթ: Անուրանալի է իրավունքի բովանդակության վրա քրիստոնեության եւ մասնավորապես Եկեղեցու ունեցած դերակատարությունը: Մասնավորապես Ը դարում Հովհան Օձնեցի Հայրապետի կողմից «Կանոնագիրք Հայոց»-ի ձեռնարկումը ոչ միայն նպատակ է ունեցել համակարգելու ծիսական ու դավանական հիմնահարցերը, այլեւ պահպանելու Եկեղեցու եւ ժողովրդի ազգային ինքնությունն ու դիմագիծը: Գրեթե նույն նպատակին ընդառաջ՝ դեռեւս 356 թ. Ներսես Ա Մեծի կողմից գումարվել է Աշտիշատի ժողովը, որտեղ ի շարս կազմակերպչական, բարեսիրական, ծիսական ու դավանական հարցերի՝ որոշվել է պայքար ծավալել պարսկական ազդեցության տարածման, հեթանոսական սովորությունների դեմ. բացել դպրոցներ, որբանոցներ, հիվանդանոցներ, անկելանոցներ, աղքատանոցներ ու այլ հաստատություններ: Պետական ու քաղաքական իշխանության բացակայության պայմաններում, ազգն ու ազգային հարստությունը պահպանելու դիտակետից ելնելով, Հայոց Եկեղեցին իր ձեռքն է առել պետական կառավարման բնագավառները, կազմակերպել, ղեկավարել կամ մասնակցել ազգային-ազատագրական, հասարակական ու քաղաքական նախաձեռնություններին ու ձեռնարկումներին:

Շարունակելի

Իսահակ վրդ. ՊՈՂՈՍՅԱՆ

Արհեստի դերի կարեւորումը Ղ. Աղայանի «ԱՆԱՀԻՏ» հեքիաթում



Սկիզբը՝ էջ 3, 4

Հեքիաթի խորհուրդն ու ուսուցողական նշանակությունն արհեստին տիրապետելն է, ու անկախ այն բանից՝ մարդ սոցիալական ինչ կարգավիճակ կունենա, պետք է տիրապետի մի արհեստի: Դիպակագործության շնորհիվ հեքիաթի հերոսները կարողանում են գերությունից ազատվելու ելք գտնել՝ փրկելով թագավորի կյանքը, որը դառնում է արհեստի հովանավոր ու պաշտպան:

Այս հեքիաթի գործնական եւ կիրառական նպատակը երեխաների մեջ աշխատասիրության, արհեստի նկատմամբ սեր արթնացնելն է: Նովելային հեքիաթում գովերգվում է ոչ միայն դիպակագործությունը, այլեւ ներկայացվում է աշխատանքի տարանջատումը տղաների եւ աղջիկների համար: Աղջիկների համար բրդից գորգեր գործելը, բամբակից՝ կտավեղեն, մետաքսից՝ նուրբ կերպասներ պատրաստելը, կարուձեւը դառնում են աշխատասիրությունը եւ արհեստասիրությունը փառաբանելու միջոցներ: Երկրագործական տարբեր գործիքների պատրաստումը, պղնձից պատրաստված կահ-կարասին դառնում են արհեստավորի աշխատանքը ներկայացնելու միջոցներ: Արհեստավորի եւ աշխատավորի կատարած ծանր աշխատանքի նշանակությունը գնահատելու վերաբերյալ Աղայանն այսպես է արտահայտվում. «Ամառը երկիրն էր գործում, ձմեռն իր արհեստը բանեցնում» (*նույն տեղում, էջ 159*):

(«Անահիտ» հեքիաթի գլխավոր հերոսուհու միանգամայն հակադիր կերպարի ենք հանդիպում Հովհաննես Թումանյանի «Անբան Հուռի» երգիծական հեքիաթում: Թումանյանի հերոսուհին կյանքի նկատմամբ այլակերպ մոտեցում ունի. նա հեքիաթային հերոսուհու ծուլության եւ անգործության խորհրդանիշ կերպար է):

«Նա մեր գետերը ծածկեց լաստերով ու կամուրջներով, մեր ծովերն ու լճերը՝ նավերով ու նավակներով: Նա մեր դաշտերը ողողեց ջրանցքներով ու առուներով, մեր քաղաքներն ու գյուղերը՝ սառն աղբյուրներով: Նա մեր սայլերին հարթ ճանապարհներ տվավ, մեր գութաններին՝ ընդարձակ երկիր: Նա կործանեց դժոխքը եւ մեր աշխարհը շինեց մի եդեմական դրախտ: Կեցցե՛ Անահիտը, կեցցե՛ հավիտյան» (*նույն տեղում, էջ 160*),– գեղեցիկ եւ աշխատանքային տարերքի մեջ ներկայացված պատկերով է ավարտվում նովելային այս հեքիաթը: Ուսման եւ արհեստի ներդաշնակությունն Աղայանը հետեւյալ կերպ է ներկայացնում. «Ուսումն ու արհեստը պետք է այնպես հյուսված լինեն միասին, ինչպես Վաչագան թագավորի դիպակը իր խորհրդավոր թալիսմաններով»: Մի արտահայտություն, որ նովելային այս հեքիաթի համար դառնում է բնաբան եւ գործողությունների առաջմղիչ ուժ: Վաչագանի՝ Անահիտին ուղարկած դիպակը նկարազարդ էր, բայց դրանք թալիսմաններ չէին, այլ ծաղկագրեր. «Իմ աննման Անահիտ, ես ընկել եմ սոսկալի դժոխքի մեջ: Այս դիպակ բերողը նույն դժողքի վերակացուներից մեկն է: Ինձ մոտ է եւ Վաղինակը: Դժոխքը գտնվում է Պերոժ քաղաքից դեպի արեւելք մի պարսպապատ մեհյանի հատակում: Եթե շուտ օգնության չհասնես, մենք կորած ենք հավիտյան»,– գրել էր թագավորը:

Աղայանը բախտավորություն է համարում թագավորի՝ սեփական օրինակով իր ժողովրդի համար արհեստի հովանավոր եւ պաշտպան դառնալու հանգամանքը: Ակադեմիկոս Արամ Ղանալանյանը հեքիաթի դերի եւ արժեւորման մասին գրում է. «Հեքիաթների կենսունակության ու դարավոր հարատեւության հետ են կապված նաեւ նրանց ժանրային-ստեղծագործական այնպիսի կարեւոր առանձնահատկություններ, ինչպիսիք են սյուժեների հարաբերական կայունության եւ տարբերակների առաջացման երեւույթները: Հայտնի է, որ հեքիաթային սյուժեները, գոյատեւելով բազում դարեր, համեմատաբար քիչ են ենթարկվել փոփոխությունների: Նրանք հիմնականում պահպանել են իրենց գլխավոր հատկանիշները, իմաստաֆաբուլային մոտիվների զուգակցման իրենց ուրույն նկարագիր» (*Ղանալանյան Ա., Հայ ժողովրդական հեքիաթներ, Եր., 1937, էջ 36*):

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ Աղայանի «Անահիտ» հեքիաթը համակողմանի ուսումնասիրության հնարավորություն է տալիս: Ժողովրդական բանահյուսության ակունքներին մոտ գտնվող հեքիաթագիրը կարողացել է արհեստը ներկայացնել սյուժետային այլ գծով՝ տալով դրա փրկարար նշանակությամբ կիրառության գործնական տարբերակը: Հնագույն առասպելաբանական պատկերացումներում դարբինը, բրուտն ու ջուլհակն էին առաջին արհեստավորները, որոնք ունեին աստվածային ծագում եւ արարչագործական կարողություններ (*տես Мифы народов мира. Энциклопедия, Москва, 1988, էջ 336*):

Աղայան հեքիաթագրի օժտվածության մասին Դերենիկ Դեմիրճյանն իրավացիորեն նշում է. «Հենց մանուկն սկսում է թոթովել՝ թոթովում է մանուկ Աղայանի հետ, սիրում է բնությունն ու մարդկային աշխարհը Աղայանի հետ: Մանկական վառ երեւակայությունը լցվում է հայրենիքի, նրա ժողովրդի հարազատ ու սիրելի պատկերներով: Աղայանը մանկանը սովորեցնում է մայրենի լեզուն, սիրել է տալիս այն: Նա մեծանում է մանկան հետ, դառնում կրակոտ պատանի, եւ Աղայանը լցնում է պատանու հոգին ազնվության, ճշմարտության, քաջության եւ աշխատանքի գաղափարներով» (*«Ղազարոս Աղայանը ժամանակակիցների հուշերում», Եր., 1967, էջ 414*):

Աղայանն ուսուցիչ-դաստիարակ էր, հմուտ գեղագետ, որն իր գեղարվեստական մեծարժեք ժառանգությունը ծառայեցեց նաեւ այդ վեհ գործին:

ԱՆՆԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՄԿՐՏՈՒՉ ՆԱՂԱՇԸ ԲԱՆԱՍՏԵՂԾ

Սկիզբը՝ էջ 5

Պանդուխտին անընդհատ տանջում է հարազատների ու հայրենիքի կարոտը: Ահա թե ինչպես է նկարագրում Նաղաշը պանդուխտի սրտի կսկիծը (*նույն տեղում, էջ 62*).

Ղարիպին հացն է լեղի, որ ճաշակէ,
Դառն ու լեղի, խառն արտասուօք ջուրն որ ըմպէ,
Թէ զօրն տան նուշ ու շաքար, որ ճաշակէ,
Երբ հառաչէ, նա ի սրտէն արիւն կաթէ...

Բանաստեղծն ամենայն մանրամասնություններով է նկարագրում պանդուխտի օրն ու ապրելակերպը, դառն ու դաժան կյանքը՝ իր բոլոր կողմերով: Իր տաղերում Նաղաշը հստակորեն շեշտում է պանդուխտի ազնվությունն ու այպարությունը, աշխատասիրությունն ու առաքինությունը: Իր եւ ընտանիքի գոյությունն ապահովելու համար պանդուխտն օր ու գիշեր շրջում է, թափառում ամեն տեղ, խնդրում աշխատանք ու մի կտոր հաց տալ իրեն: Սակայն օտարության մեջ ամեն օր ու ամենուրեք պանդուխտն արժանանում է արհամարհանքի, ստորացման, կոպիտ ու նվաստացուցիչ վերաբերմունքի: Վաստակելու դեպքում էլ նրա ստացածն այնքան քիչ է լինում, որ հազիվ կարողանում է իր քաղցը բավարարել: Երբեմն Նաղաշն ավելի ու ավելի է սրում իրավիճակի լրջությունն ու դառնությունը՝ խոր հուզականությամբ ցույց տալով, թե ինչպես հաճախ ազնիվ ու առաքինի պանդուխտները, աշխատանք ու գումար չգտնելով, սոված ու ծարավ, հուսահատությունից ընկնում են դռնեդուռ եւ սկսում ողորմություն խնդրել (*նույն տեղում*).

Ղարիպին վայն էր եկեր, երբ քաղցենայր,
Երես ի քաշ փողոցներըն կու մուրայր,
Շատոք փակեն զդուռն ի դիմաց, նստէր ու լայր,
Թէ կաթ մի ջուր ուզէր գերին, մէկ մի չիտայր...
Ղարիպին աղքատութիւնն է խիստ դիժար,
Յամէն դիմաց էր նեղացած ու ճար չկայր,
Ղարիպն օտար էր ու պանդուխտ երկիր օտար,
Թէեւ նա ուզէր գերին, մէկ մի չիտայր...

Այս էր հայ պանդուխտի ճակատագիրը, այս էր ժամանակի թելադրանքը հայի ճակատագրին՝ գերություն, պանդխտություն, ավեր ու ավար, սով, քաղց, օտարություն:

Նաղաշը չի բավարարվում օտարության մեջ տառապող պանդուխտի միայն արտաքուստ երեւացող տառապանքը պատկերելով: Նա բացում է նաեւ իր կերպարների հոգեբանական դրամա: Պանդուխտը բացարձակ անապահով ու անօգնական է՝ թողնված բախտի քմահաճույքին, հատկապես այն ժամանակ, երբ հիվանդանում է: Այդ ծանր վիճակում, օտար, ցուրտ ու խոնավ պատերի տակ պառկած պանդուխտը հիշում է իր հարազատներին, դառը լալիս ու հառաչում (*նույն տեղում, էջ 63*).

Ղարիպն խեղճ էր, երբ յանկարծ հիւանդանայր,
Յօտար փողոց մոխրաթաւալ անկեալ կենայր,
Թէպէտ ուներ շատ սիրելիք՝ մէկ մի չկայր,
Եւ կայր անկեալ վերայ երեսին, դառն ու կու լայր:

Աստիճանաբար իրավիճակն ավելի է լարվում: Վրա է հասնում պանդուխտի հոգեվարքի պահը: Մահվան ճիրաններում գտնվող պանդուխտը սարսափահար օգնության կանչ է անում, բայց նրան ոչ ոք չի լսում, նրա վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնում: Եվ նույնիսկ այսպիսի դժվարին պայմաններում ղարիպը մտածում է տուն վերադառնալու մասին եւ իր մահկանացուն կնքում է աչքերը հայրենի եզերքը տանող ճանապարհին հառած եւ հարազատների կարոտը սրտում: Մահն անգամ չի փոխում պանդուխտի հալածական վիճակը: Բանաստեղծը ցավով արձանագրում է, որ մահացած պանդուխտի հետ օտարության մեջ վարվում են մարդուն անվայել կերպով: Մահացածի վրա լաց լինող չկա, եւ բացի այդ՝ նրա թաղման արարողությունը սովորականից ավելի կարճ է՝ առանց ընդունված արարողակարգերի (*նույն տեղում*).



Տես, թէ ինչ դառն է մահ ու կեանքն ղարիպին.
Մէկ մի չկայր՝ զձեռքն խաչէր ի վերայ սրտին,
Ծիծաղելով առեալ տարան յեզեր հողին,
Մէկ մի չեկաւ անդ ի թաղումըն ղարիպին:

Պանդխտության թեմայով գրված տաղերից յուրաքանչյուրում ակնհայտորեն երեւում են Նաղաշի անսահման կարեկցանքն ու սփոփանքը դեպի պանդուխտը: Սրան զուգահեռ՝ վառ արտահայտված են նաեւ բանաստեղծի ատելությունն ու զայրույթը դեպի բարձր խավի ներկայացուցիչները: Բանաստեղծի համոզմամբ՝ ղարիպի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքն առաջին հերթին բխում է նրանից, որ նրանց նկատմամբ նվաստացուցիչ եւ դաժան վերաբերմունք ունեն վերնախավի ներկայացուցիչները՝ իշխաններն ու մեծահարուստները: Հիշենք, որ Նաղաշն այդ մարդկանց անվանում էր ագահներ եւ ոխակալներ, որոնք իրենց բարեկեցությունն են ապահովում թալանելով մյուսներին:

Հետո Նաղաշը մի պահ կարծես թե ցանկանում է ցույց տալ կյանքի անհավասարությունը: Մեկի սեղանը լի է բարիքներով, տեսակ-տեսակ ուտեստներով, իսկ պանդուխտն անգամ ամաչում էր մոտենալ այդ սեղանին եւ բավականանում էր միայն նախատինքներով տրված մի կտոր հացով (*նույն տեղում*).

Շատոց սեղան լինէր դրած հազար բարով,
Եւ գայր ղարիպն ու մտանէր ամաչելով.
Նայ հազար գէշ ասեն նմայ նախատելով,
Ապա թէ տան կտոր մի հաց տրտնջալով...

Շարունակելի

Վարդան ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՄԵԿԸ ԶՈՐԱՎԱՐԻ ԱՐԾԻՎՆԵՐԻՑ



«Ահա իմ բախտը, որով ապրում եմ
շատերից երջանիկ…»
Ավ. Իսահակյան
«Գարիբալդիականը»

Աչքերիս առջեւ է նա՝ Անդրանիկի զինվորը՝ թիկնեղ, վերձիգ, առնացի ու համակրելի կեցվածքով այրը, որն իրեն այնքա՛ն սազող զինվորական համազգեստով, բուն անելիքը չգտնող մարդու նման տխուր ու մտախոհ դեգերում էր Աշտարակի փողոցներում՝ հայացքը՝ թափառ, միտքը՝ տարիների հեռուն…

Սակայն հպարտ ու երջանիկ էր նա, քանզի սրտի մեջ Անդրանիկին ուներ…

Արեւմտահայ էր, Անդրանիկ Օզանյանի հայրենակիցը՝ նույն Սեբաստիա նահանգից: Միհրան Հովհաննեսի Զաքարյան: Տարաբախտ հայի ճակատագրի կամոք պիտի ապրեր անձկալի հայրական օջախից հեռու՝ նրա այրող կարոտանքով եւ վերադարձի մշտագո հույսով: Ապրում էր այն հերոսական օրերի հուշերով, երբ ինքը՝ ջահել զինվոր, երակներում ահագնացած ուժ ու կորով, արդար վրեժով բորբոքուն՝ կռիվ էր տալիս անգութ թուրքերի դեմ:

Պաշտելի զորավարի կողմից զորքը ցրելուց հետո, շուրջ 60 տարի, մինչեւ խոր ծերություն ու մահ, քանի՛ ձեռք զինվորական համազգեստ մաշեց. ասել է թե՝ անվհատ, հավատով ու կանչի սպասումով՝ իրեն միշտ շարքում՝ զինվո՛ր զգաց:

Երբ արդեն ծանոթներ էինք, միայն զինվորական հագուստ կրելու մասին հետաքրքրությանս պատասխանեց.

– Տղա՛ս, գիտե՞ս, Զորավարս ինչ ըսած է մեռնելե առաջ՝ «Մահս չեմ հոգար, հեյվա՛խ, գործս կիսա՛տ մնաց…»: Հասկըցա՞ր…

* * *

Առաջին անգամ նրան տեսել եմ Աշտարակի զինկոմիսարիատում՝ 60-ականների սկզբին: Այստեղ ելումուտ անող բարձրաստիճան սպաների մեջ հենց երեւաց ռազմական այդ հիմնարկության ամենահամեստ «պաշտոնյան»՝ պարետը, անուսադիր շինելով ծերունազարդ Միհրանը՝ զորական մարդու իր առինքնող կեցվածքով, վեհորեն առանձնացավ մյուսներից: Հանդարտաքայլ, վսեմ խրոխտությամբ իջավ աստիճաններով, լուսեղեն մի հայացք սփռեց շարք կանգնած զինակոչիկներիս վրա, աչքերով սիրեց, գուրգուրեց բոլորիս (ո՞վ գիտե՝ ինչե՞ր անցան մտքով…): Այնպես ձգող էին թիկնավետ զինվորականի նրա տեսքն ու հմայիչ ժպիտը, որ պատրաստ էինք նույն պահին զինավառվել եւ Միհրան պապի հրամանատարությամբ մինչեւ իսկ աշխարհի ծայրը գնալ…

Նա մեզ առավել ձգեց, երբ խոսքի անազատության այն օրերում ոչ բարձրաձայն ասացին, թե Անդրանիկի արծիվներից մեկն է եղել…

Խաթարվել էր նրա կյանքը: Ինչպիսի՜ նեղություններ էր կրել Անդրանիկի կամ, որ նույնն է, հայրենիքի զինվորը լինելու համար. բանտ, աքսոր, պարտադրված լռություն, աղքատություն, նաեւ պետական արհամարհանք:

Հետո նոր ժամանակներ եկան: Հալվեց լռության սառույցը: 1965 թ. փետրվարի 25-ին, Հայաստանի հայրենասեր ղեկավար Յակով Զարոբյանի ջանքերով, առաջին անգամ հանդիսավորությամբ նշվեց Զորավարի ծննդյան 100-ամյակը: Ժողովուրդը, իհարկե, չէր մոռացել իր հերոսին: Եվ, ահավասիկ, մեծ հայդուկապետը գնահատվում էր պետական մակարդակով:

Տոն էր եւ հին զինվորի տասնամյակներ կաղապարված սրտում: Հոգին լցվել էր երանությամբ, նա ինչպես էր աշխուժացել. խնդությունից ասես խենթացել էր: Ցնծահույզ բերկրումով աջ ու ահյակ բաժանում էր կենսաթոշակի ամբողջ գումարով գնած լրագրերի հոբելյանական համարները: Նշխարի պես տալիս էր ծանոթ-անծանոթներին, հպարտ բարձրաձայնում.

– Աղբա՛րս, քույրի՛կս, վերցո՛ւր, կարդա՛, Զորավարիս մասին է՝ Անդրանիկի՜, Անդրանիկ Զորավարիս…

Տարիների լռությունից հետո լիահագագ գոռալ էր ուզում, բոլորին հասցնել էր ուզում իր սիրո, իր ցավի, իր հոգու կալանված ճիչը՝ «Անդրանիկ» սուրբ անունը…

1969 թ. աշնանը վրացահայ ընկերոջս հետ եղանք Ուջանում: Մարդաշատ էր զորավարի՝ գյուղացիների համառ կամքով կանգնեցված արձանի մերձակայքը: Անդրանիկի մարտիկներից մեկը՝ ծերմակահեր, բարետես արտաքինով Խորեն Քոչարյանը, հայրենասեր ուջանցիներին կապոցներով ընծա էր բերել՝ Ստ. Կուրտիկյանի «Պրոլոմյան հովտաշուշաններ» նոր լույս տեսած գրքից 100 օրինակ: Երբ ասվեց, թե գրքում Զորավարի մասին պատմվածքների շարք կա, իրարանցում սկսվեց, եւ մեկ-երկու ակնթարթում մարդիկ միմյանց ձեռքերից թռցրին բոլոր օրինակները:

Բարեգործն ինքնաբավ ժպտում էր. մեծն հայդուկապետի մասին մեզանում տպագրված առաջին գեղարվեստական խոսքը ժողովուրդը որքան սրտալի ընդունեց, որքան անպարպելի սեր կա ժողովրդի երախտագետ սրտում…

Խորեն Քոչարյանին տեղեկացրի, որ հանգամանքների բերումով Աշտարակում է ապրում իրենց զինակիցներից մեկը: Ուրախացա՛վ, խնդրեց օգնել՝ տեսակցեն:

Այդ հանդիպո՛ւմը… Նրանք նախ երկու քայլի վրա զսպված լռությամբ զննեցին միմյանց, ապա զորախմբերում իրենց տեղերը ճշտելուց հետո ուղիղ կես դար անց գտան, ավելի ճիշտ՝ վերագտան իրար:

Ու հորդացին զգացմունքները: Պահ անց Միհրանը նկատեց զինակից ընկերոջ կրծքին ոսկու փայլով շողշողացող «Ֆրանսիայում կտրված» Անդրանիկի պատկերով մեդալը: Ալեկոծվե՛ց: Ջլապինդ մատները սեր ու քնքշանք դարձրած՝ խանդաղատանքով հպեց զորավարի դիմապատկերին: Հետո ծալվեցին հին զինվորի ծնկները, խոնարհվեց զորավարի մեդալի վրա ու դողդոջուն շրթունքներով, գոց աչքերով համբուրե՛ց, համբուրե՛ց…

– Զորավա՛րս, զորավա՛րս,– շշնջում էր կամացուկ, սուրբ աղոթքի նման, մի տեսակ վերացած՝ վերահաս հոգեսլացումի մեջ:

Այսքա՛ն էլ սե՞ր… Եվ բացվեցին սրտի քարացած աչքերը…

Ամեն ինչ շիտակ էր մարդկայնորեն, բնական, հոգեբուխ…

Խորեն Քոչարյանը ցավով, բայց եւ անթաքույց հպարտության շեշտով ասաց.

– Գիտե՞ս, Միհրա՛ն եղբայր, Անդրանիկի զինվոր լինելու համար ամբողջ տասը տարի աքսոր եմ քշվել…

– Էհ՛, Խորե՛ն, աղբա՛րս, քսան տարի ալ՝ ես…

Հանդիպումը, հիրավի, սրտաշարժ էր: Շրջապատողներս՝ ակամա հանդիսատեսներ, խորապես զգացվել էինք: Հազվադեպ պատեհություն. բեմ ու բեմականացում չէր, չկար ռեժիսոր-ռեժիսուրա, մեր առջեւ իրական կյանքն էր, կյանքի դրաման՝ իրական գործող անձերով…

Վերջին անգամ Միհրան Զաքարյանին տեսա բարեկամիս լուսանկարչատանը: Անդրանիկի այժմ շատ հանդիպող, բնօրինակ մի լուսանկար էր բերել եւ խնդրում էր ֆոտոմոնտաժի եղանակով իր նկարը գեներալի «քովը դնել»:

– Խառը տարիներ էին, չկրցա Զորավարիս հետ առանձին նկարվել… Քանի կապրիմ, այս մեկ նկարն ալ գլխուս վերեւը կունենամ, երբ մեռնիմ, հարկավ, հոգիս Զորավարիս կերթա…

Հետո այլեւս չտեսա ծերունազարդ զորականին: Նրա մահն ու թաղումն էլ իր ապրած համեստ, անաղմուկ կյանքի պես աննկատ եղան…

Հանկարծ զգացի, որ մեր քաղաքի փողոցներից ուրույն մի երանգ է պակասել: Ողորմի՜ քեզ, հին զինվոր: Երանի թե ապրեիր, աչքովդ տեսնեիր ազգային մեր վերազարթոնքի, ֆիդայության վերածննդի քո փափագած օրերը եւ, մանավանդ, հայոց կանոնավոր բանակի զենքի ուժը…

Իսկ զորավոր Զորավարդ, բոլորիս Զորավարը, վերադարձել, փարվել է հայոց սրբասուրբ հողին, մեր դյուցազնական հողին, քո հողին…

Սերժ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԶԵՌՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Սկիզբը՝ էջ 4

Յոթներյակի հարցի շուրջ պետք է նկատել մի առանձնահատկություն Հայոց ու Հուլյան տոմարների միջեւ: Եթե պետք է յոթներյակը որոշել ըստ Հայոց տոմարի, ապա պետք է գործողությունից հետո ստացված արդյունքը բաժանել 7-ի, իսկ Հուլյան տոմարի դեպքում՝ 28-ի, քանի որ յուրաքանչյուր 4 տարին մեկ նահանջ տարի է: Այդ պատճառով է, որ Հուլյան տոմարի պարբերաշրջանը հավասար է շաբաթվա օրերի թվի եւ նահանջ տարիների պարբերաշրջանի արտադրյալին (7 x 4 = 28) (*այս մասին առավել մանրամասն տես Բաղալյան Հ., նշվ. աշխ., էջ 125*):

Պետք է նշել, որ հայոց տոմարական մատենագրական ժառանգության մեջ մեզ են հասել «Պատճէն տոմարի հայոցի» բազմաթիվ խմբագրություններ, որոնցում հեղինակները տարբեր կանոններով ու միջոցներով որոշել են արեւային տարվա եղանակները (Գարնանամուտ, Ամառնամուտ, Ձմեռնամուտ, Աշնանամուտ), երկնային (աստղագիտական) երեւույթների (Անկաստեղ, Ելաստեղ) եւ տոների (Հայտնություն, Տյառնընդառաջ, Ավետումն Աստվածածնի, Վերափոխումն Աստվածածնի, Սուրբ խաչ եւն) ժամանակները՝ Հայոց եւ շարժական, եւ անշարժ տոմարների ամիս-ամսաթվերով, ինչպես եւ բազմաթիվ այլ ժողովուրդների, մասնավորաբար՝ Հուլյան անշարժ տոմարներով (*տես Սիմոնյան Գ., Անկաստեղ (Տոմարական մի եզրույթի հետքերով), Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Եր., 2017, էջ 36*): Եթե տարվա եղանակները, տոների անվանումները որոշակիորեն հասկանալի ու ըմբռնելի հասկացություններ են, ապա «Անկաստեղ» ու «Ելաստեղ» տոմարական եզրույթները հիմնականում մանրազնին քննության առարկա չեն դարձել կամ էլ պարզապես հասկացվել են իբրեւ որեւէ աստղի արեգակնային անկումը կամ արեգակնային ամբարձումը՝ ծագումը, ելքը: Եվ այս շատ կարեւոր խնդրին է նվիրված Գ. Սիմոնյանի ծավալուն հոդվածը, որը, կարծես, նոր շունչ է տալիս նշյալ եզրույթներին եւ դրանք դիտարկում խորությամբ եւ համակողմանիորեն (*տես Սիմոնյան Գ., Անկաստեղ (Տոմարական մի եզրույթի հետքերով), էջ 36–65*):



Այս խնդրին մեր անդրադարձը չպետք է տարօրինակ թվա, քանզի Անկաստեղի եւ Ելաստեղի վերաբերյալ կանոնի ենք առնչվում Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» գրվածքում: Վերջինս ներկայացնում է հետեւյալ կանոնը. «Իսկ վասն անկաստեղն, զի ասէ «Ը. (8) ի վերայ նահանջի», վասն զի ի դնել թուականին անկաստեղն ի Մարերի Թ. (9) (*պրոֆ. Ռ. Վարդանյանը «Մարերի Թ»-ն (9) ուղղել է Մարերի Ը. (8), տես Վարդանյան Ռ., «Պատճէն տոմարի հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը (6–18-րդ դդ.), էջ 24*), վասն այնորիկ պարտ է Ը. (8) ի վերայ, զի ամիսն զլիութիւն առցէ: Նոյնպէս եւ ի Մարգացի ԺԹ. (19) (պրոֆ. Ռ. Վարդանյանը «Մարգաց ԺԹ»-ն (19) ուղղել է Մարգաց ԺԸ (18), *տես նույն տեղում*) էր ելաստղն, վասն այնորիկ ԺԸ. (18) ի վերայ պիտի ածել, զի ամիսն զլիութիւն առցէ եւ դիւրաւ գտանի խնդրելին»:

Ինչպես նշել ենք բազմիցս, Հովհաննես Կոզեռնն իր սահմանումները հիմնականում վերցրել է Անանիա Շիրակացու տոմարական ժողովածուից եւ Աթանաս Տարոնացու «Պատճէնից», որտեղ հաստատուն թվերը հնարավորություն են տվել Շ-յակի առաջին քառամյակի կտրվածքով եւ Հայոց մեծ թվականի նահանջներով որոշել Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերը՝ ըստ տարվա եղանակների եւ աստղագիտական երեւույթների: Հարկ է ընդգծել նաեւ, որ վաղ շրջանի տոմարագետները, որոնց թվում եւ Հովհաննես Կոզեռնը, վերցրել են Հայոց մեծ թվականի նահանջի թիվը եւ գումարել հաստատուն թվին, անհրաժեշտության դեպքում հանել 30 եւ մնացորդով ստացել անշարժ օրերի Հայոց շարժական տոմարի առանձին օրերի եւ դրանց ամսաշարքի տարիները (*տես նույն տեղում*, էջ 25–26, ասվածի վերաբերյալ մանրամասն օրինակներ բերված են նշվ. աշխ.-ի 25–27 էջերում): Ներկայացնելով մի քանի կարեւոր տեղեկություններ Անկաստեղի վերաբերյալ՝ նշենք, որ Գ. Սիմոնյանը ներկայացնում է այն վարկածը, որ «Անկաստեղ» եւ «Ելաստեղ» եզրույթները վերաբերում են ոչ թե ինչ-որ աստղերի (Բույլք-Բազումք, Շնկան, Ալկիոն) անկմանն ու ծագմանը՝ ելքին, այլ Անկաստղն ու Ելաստղը այդ աստղերի կամ աստղաբույլերի կոնկրետ անվանումներն են: Այս տրամաբանությամբ՝ Անկաստեղը պետք է հասկանալ Անկ կամ Զանկ անունով աստղի կամ աստեղատան անվանում, իսկ Ելաստղը՝ Ել կամ Եղ անունով աստղի կամ աստեղատան անվանում, ինչպես որ կարելի է հանդիպել տարբեր գրչագրերում կամ մեկնություններում:

Շարունակությունը՝ էջ 8

ԼՈՒՍԱՎՈՐ ՈՒՂԻ, ՈՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼՈՒ Է

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հիմնադրման 145-ամյակի առթիվ



Հայ ժողովուրդն իր բազմադարյան պատմության ընթացքում միշտ էլ կարեւորել է գիտությունը, դաստիարակությունն ու ուսումը: Մեր հայրենիքի տարբեր վայրերում հնարավորության դեպքում հիմնադրվել են գիտակրթական հաստատություններ, որոնք շատ հաճախ գործել են դժվարին պայմաններում: Սակայն նրանց ուսուցիչներն ու աշակերտները միշտ էլ ձգտել են բարձր պահել գիտական ու կրթական գործի մակարդակը, իրենց փոքր կամ մեծ վաստակն ունենալ հայ դպրության զարգացման գործում: Իսկ երբ հայրենիքում հնարավոր չի եղել բավարար ուսում ստանալ, բազմաթիվ հայորդիներ ուսման ծարավը ստիպված են եղել հագեցնել օտար երկրների կրթական հաստատություններում: Հայրենիքի համար դժվարին ժամանակներում, երբ մարդիկ հարկադրված հեռացել են հայրենիքից, ջանք չեն խնայել այլ երկրներում էլ կրթօջախներ բացելու, որոնցից շատերն այսօր էլ գործում են: Սերն ու հարգանքը գրքի նկատմամբ գրեթե պաշտամունքի են հասել:

Կրթական գործի կազմակերպման հարցում միշտ էլ կարեւոր է եղել Հայ Եկեղեցու դերը, որին կից են հիմնականում գործել ձեռագրատներն ու կրթական հաստատությունները, եւ որի նվիրյալներն են դարեր շարունակ իրենց գիտելիքները փոխանցել ուսում ստացող նոր սերունդներին: Հայ բազմաթիվ կրթօջախների շարքում իր առանձնահատուկ տեղն ու դերն ունի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանը (Աստվածաբանական համալսարանը), որը գրեթե մեկուկես դար է, ինչ կրթություն է տալիս բազմաթիվ սաների: Ճեմարանի շինարարությունն սկսվել է 1869 թվականի մայիսի 25-ին: Հանդիսավոր բացումը կատարվել է ուղիղ 145 տարի առաջ՝ 1874 թվականի սեպտեմբերի 28-ին: Նույն թվականին Ռուսաստանի լուսավորության նախարարության վավերացրած կանոնադրության համաձայն՝ ճեմարանն ունենալու էր երկու բաժին՝ դասարանական (6-ամյա) եւ լսարանական (3-ամյա) ուսուցմամբ եւ տալու էր հոգեւոր բարձրագույն կրթություն:

Հեշտ չի եղել ճեմարանի հիմնադրումը, դժվար է եղել նաեւ անցած ուղին: Գեւորգ Դ Կաթողիկոսը, որն արդեն տարբեր վայրերում հիմնել էր մի քանի կրթօջախներ, շատ ջանք է թափել, որպեսզի կարողանա հիմնել նաեւ այս հաստատությունը: Դժվարությունը միայն նյութական միջոցներ հայթայթելը չէր: Անհրաժեշտ էր գտնել հմուտ մասնագետներ, ստեղծել կրթական ծրագրեր ու դասագրքեր, տարբեր վայրերից սովորելու եկած աշակերտների համար կրթական ու կեցության պայմաններ ստեղծել: Մեծ դժվարությամբ իրականացված այս գործին հենց սկզբից եւս մի փորձություն էր սպասվում: Փոքրաթիվ ուսուցիչներ եւ 65 աշակերտ ունեցող նորաբաց ուսումնական հաստատությունում բացումից ընդամենը 18 օր հետո՝ հոկտեմբերի 16-ին, հրդեհ է բռնկվում, որը տեւում է 12 ժամ: Հրդեհը զգալի վնաս է հասցնում, եւ դասերը որոշ ժամանակ հնարավոր չի լինում կազմակերպել նորակառույց շենքում: Սակայն հանգանակությունների շնորհիվ շուտով հաջողվում է վերակառուցել եւ վերանորոգել շինությունը, եւ վեց ամիս անց ժառանգավորաց դպրոց տեղափոխված դասերը նորից սկսում են ընթանալ ճեմարանի շենքում:

Կրթօջախն աստիճանաբար լայն ճանաչում է ստանում ոչ միայն Հայաստանում, այլեւ արտերկրում: Տարբեր տեղերից ուսանելու էին գալիս պատանիներ ու երիտասարդներ, որոնց արդեն դասավանդում էին մեծաթիվ բազմավաստակ գիտնականներ՝ իրենց գործի նվիրյալներ: Գեւորգյան ճեմարանում դասավանդողների միայն անունների թվարկումն արդեն իսկ պարզ է դարձնում, թե գիտամանկավարժական ինչ հզոր հաստատության էր վերածվել ճեմարանը՝ Հրաչյա Աճառյան, Հովհաննես Հովհաննիսյան, Հակոբ Մանանդյան, Լեո, Փանոս Թերլեմեզյան, Վարդգես Սուրենյանց, Քրիստափոր Կարա-Մուրզա, Մակար Եկմալյան, Գարեգին Հովսեփյան, Ստեփանոս Մալխասյանց... Հանրաճանաչ այս անունների թվարկումը կարելի է շարունակել, բայց պակաս հանրաճանաչ չեն նաեւ ճեմարանի սաներից շատերը, որոնց մի մասը հետագայում նաեւ դասավանդեց իր հարազատ կրթօջախում՝ Կոմիտաս, Արմենակ Շահմուրադյան, Մանուկ Աբեղյան, Գեւորգ Չորեքչյան (Ամենայն Հայոց Կաթողիկոս (1945–1954)), Լեւոն Շանթ, Ավետիք Իսահակյան, Ակսել Բակունց, Դերենիկ Դեմիրճյան եւ շատ այլ երախտավորներ:

Հեշտ չի եղել ճեմարանի անցած ուղին՝ նյութական դժվարություններ, քաղաքական անբարենպաստ վիճակներ, փակում, վերաբացման փորձեր եւ ի վերջո նորից գործունեություն: Հնարավոր չէ մի փոքրիկ անդրադարձով ներկայացնել ճեմարանի անցած բարդ ու հարուստ ուղին, խոսել այդ ճանապարհի տարբեր հատվածներում իրենց մեծ կամ փոքր վաստակը բերած բոլոր մարդկանց մասին: Այդ ամենի մասին գրվել են բազմաթիվ գրքեր ու հոդվածներ եւ դեռ կգրվեն նորերը, որովհետեւ այսօր էլ շարունակվում է ճեմարանի ուղին, հաջողությամբ շարունակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի բարձր հովանու, աչալուրջ հսկողության ու հայրական խնամքի ներքո:

Ճեմարանի ներկայիս սաներն էլ նախկինների նման ուսանելու են գալիս Հայաստանի տարբեր մարզերից ու արտերկրից, եւ նրանց ուսուցման գործը Գարեգին վարդապետ Համբարձումյանի տեսչությամբ պատշաճ կերպով իրականացնում են ճեմարանի գիտամանկավարժական եւ վարչական աշխատակիցները: Համոզված ենք, որ ճեմարանի մասին հետագայում գրողներն արդեն կնշեն ներկայիս սաների ձեռքբերումներն ու նորանոր նվաճումները, որոնք անշուշտ լինելու են:

Արտաշես ՍԱՐԳՍՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԶԵՌՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Սկիզբը՝ էջ 4, 7

Եվ քանի որ ուսումնասիրողը հանդիպում է նաեւ Անկաստղի Զանկբազմաստեղ հոմանիշին, ապա այս դեպքում վստահորեն կարելի է ասել, որ խոսքը համաստեղության մասին է (*տես Սիմոնյան Գ., նշվ. աշխ., էջ 38*):

Իր տոմարի մեկնության մեջ Հովհաննես վարդապետը խոսում է նաեւ Գարնանամուտի եւ Ցմեռնամուտի, Աշնանամուտի մասին, անդրադառնում է նաեւ մի շարք տոների՝ Սուրբ Խաչին, Աստվածածնի տոնին, Հայտնության ամսաթվին, Զատկի տոնին եւ նրանց հաստատունների վերլուծությանը: Պետք է նկատել եւ ուրվագծել, որ Հովհաննես Կոզեռնը նշյալ տոների ամիս-ամսաթվերը տալիս է Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերով՝ ըստ Անանիա Շիրակացու կազմած 532-ամյա զատկացուցակի: Մենք Ջ. Էյնաթյանի հրատարակության մեջ նկատել ենք մի շատ կարեւոր բան. Զատկի Լուսնի լրման հատվածում Լուսնի լրումը դրված է Մարերի Գ (3), իսկ Զատիկը՝ Մարերի ԺԴ (14): Սակայն լրումը պետք է լինի ոչ թե Մարերի Գ (3), այլ Մարերի Է (7): Մեր կարծիքով՝ դա գրչական սխալ է, որովհետեւ Շ-յակ-ի առաջին տարում Լուսնի լրումը Մարերի Է (7)-ին է, որը հաստատվում է նաեւ Շիրակացու զատկացուցակով: Հարկ է նշել, որ բերված երկու մեկնությունները ավարտվում են «Յաղագս երից ժամոց»-ով, որի հեղինակը, ըստ Էյնաթյանի, Կոզեռնը չէ: «Յաղագս երից ժամոց»-ը ավարտվում է անչափ հետաքրքիր հատվածով, որը սահմանում է տառերի թվային արժեքները: Մանրամասն անդրադարձ չկատարելով մեկնության մեջ առկա բոլոր տոներին, աստղագիտական երեւույթներին ու դրանց հաստատուններին՝ ուզում ենք ասել, որ պրոֆ. Ռ. Վարդանյանը վերականգնել է Հովհաննես Կոզեռնի «Պատճէնի» ամսաշարքը (*տես Վարդանյան Ռ., նշվ. աշխ., էջ 100*), որը ավելի մատչելի ու կոնկրետ է ցույց տալիս տոների տոնման ժամանակը: Նշենք նաեւ, որ ամսաշարքի աղյուսակի առաջին շարքի թվերի վերին սահմանն է 1004 թվականը, իսկ 2-րդ շարքի ներքին սահմանը՝ 1011 թվականը: Միջին թվականը ստացվում է 1007-ը: Ռ. Վարդանյանը նախապատվությունը տալիս է միջին թվականին՝ եւս մեկ անգամ շեշտելով, որ Կոզեռնը «Ծռազատկի բացատրությունը» գրել է հենց 1007 թվականին, երբ եղել է Շ-յակի առաջին շրջապտույտի վերջին Ծռազատիկը (*տես նույն տեղում*):

Նշենք, որ Ռ. Վարդանյանը, օր., ««Պատճէն տոմարի հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը (6–18-րդ դդ.)» աշխատության մեջ բերում է նաեւ մի այլ աղյուսակ, որտեղ նշվում են անշարժ տոների, տարվա եղանակների եւ աստղագիտական երեւույթների անվանումները, հաստատունները Շ-յակի առաջին շրջանի առաջին քառամյակում, հաստատունները Նավասարդի 1-ից հետո, հաստատունների փոփոխման ժամանակը եւ «Պատճէնի» կանոնախմբի հեղինակը եւ ժամանակը (*տես Վարդանյան Ռ., էջ 176*): Այդ աղյուսակից պարզորոշ երեւում է, որ Հովհաննես Կոզեռնը խմբագրել է Գարնանամուտի եւ «Աւետիք այլազգեաց»-ի կանոնները: Խոսելով Գարնանամուտի կանոնի մասին՝ նշենք, որ նա 13 հաստատունը դարձրել է 8: Գարնանամուտի կանոնը փոփոխություն կրեց 1004 թվականից, եւ 13 հաստատունի արժեքը վերածվեց 8-ի: Վերջինիս մեկնությունը տվել է Հովհաննես Կոզեռնը: 13 հաստատունի հետքեր գտնվում են ՄՄ Հմր 1973, 3846 եւ 2001 գրչագրերի «Պատճէններում», որոնք ցույց են տալիս, որ հաշվարկը գալիս է Շ-յակի առաջին շրջապտույտից (*տես նույն տեղում*, էջ 181): Հարկ է նշել նաեւ, որ ՄՄ Հմր 1999 եւ 3846 գրչագրերի «Պատճէններում» նույնպես առկա է 13 թիվը՝ իր հավելումով, այն է՝ «զաւելիսն հան», որը հենց նշանակում է 13 հաստատունի վերածումը 8-ի (*տես նույն տեղում*):

Ամփոփելով ասենք, որ 1007 թվականին Հովհաննես Կոզեռնը գրել է «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը, որտեղ եղել է իր խմբագրած «Պատճէնը»: Այդ երեւում է «Յարակայքի» տվյալների վերլուծությունից, «Աւետիք այլազգեաց»-ի եւ Գարնանամուտի կանոնների քննությունից, ինչպես եւ անշարժ օրերի եւ Հայոց շարժական տոմարի ամսաշարքի տվյալներից: Հասկանալի է դառնում Մատթեոս Ուռհայեցու տեղեկությունը Շ-յակի վերջին Ծռազատկի (1007 թ.) մեկնության մասին, որը կապվում է Հովհաննես Կոզեռնի եւ Գեւորգ Հնձեցու անունների հետ: Հովհաննես Կոզեռնը, հիմնվելով Անանիա Շիրակացու Զատկի ճառի վրա, գրել է Ծռազատկի մասին մի գրություն-մեկնություն, որը եղել է «Մեկնութիւն տոմարի»-ում՝ որպես նրա բաղկացուցիչ մաս: Ծռազատկի թվականը 1007-ն է, ուստի Մատթեոս Ուռհայեցին անուղղակիորեն տվել է «Մեկնութիւն տոմարի» աշխատության գրման թվականը (*տես նույն տեղում, էջ 193–194*):

Գոռ ԳԱԼՍՏՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ 517197
Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com
web կայք՝
krishayas.wordpress.com
Ստորագր. տպագր. 13.09.2019 թ.
Տպաքանակը՝ 1175